ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ
**«Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի /մասնակի/ 2-րդ կետի կիրառմամբ**
Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2023 թվականի ապրիլի 6-ի «2» որոշմամբ

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԵՔ-ԲՄԾՁԲ-23/18**

Պատվիրատուն՝ Երևանի քաղաքապետարանը, որը գտնվում է ք. Երևան, Արգիշտիի 1 հասցեում, հայտարարում է բաց մրցույթ, որն իրականացվում է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

Սույն ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել Երևանի քաղաքապետարանի և Երևանի քաղաքապետարանի ենթակայության հիմնարկների աշխատակիցների համար «Առողջության ապահովագրություն» փաթեթի ձեռքբերման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի սույն ընթացակարգին մասնակցելու հավասար իրավունք:

Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև մասնակիցներին ներկայացվող պայմանները սահմանված են սույն ընթացակարգի հրավերով:

Ընտրված մասնակիցը որոշվում է ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Սույն ընթացակարգի նկատմամբ կիրառվում են Առևտրի համաշխարհային կազմակերպության պետական գնումների համաձայնագրի դրույթները:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն անվճար ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն ընթացակարգին մասնակցության հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված մինչև **2023 թվականի մայիսի 8-ը, ժամը 10:00-ը**: Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, **2023 թվականի մայիսի 8-ին, ժամը 10:00-ին:**

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքարկումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար ՝ Ա. Համբարձումյանին:

**Հեռախոս՝** 011514374:
**Էլ.փոստ՝** *ani.hambardzumyan@yerevan.am*
**Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան:**

Հաստատված է
«**ԵՔ-ԲՄԾՁԲ-23/18** » ծածկագրով
բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի
2023 թ. ապրիլի 6-ի N 3 որոշմամբ

*«Երևանի քաղաքապետարան»*

# Հ Ր Ա Վ Ե Ր

## ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԹԵԹԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ

*Հարգելի մասնակից նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:*

*Եթե Դուք գրանցված չեք էլեկտրոնային գնումների համակարգում, սակայն ցանկություն ունեք մասնակցել սույն ընթացակարգին, ապա հայտ ներկայացնելու համար անհրաժեշտ է ինքնագրանցվել Armeps համակարգում (www.armeps.am): Համակարգում գրանցվելու պայմանները սահմանված են www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրի «Օրենսդրություն» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում տեղադրված Armeps էլեկտրոնային գնումների համակարգի օգտագործողի «Տնտեսական օպերատորի» ուղեցույցում:*

*Ուղեցույցը հասանելի է հետևյալ հղումով՝* http://gnumner.am/hy/page/ughecuycner_dzernarkner/*:*

*Միաժամանակ՝*

*- հայտը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգ (այսուհետ՝ համակարգ) մուտքագրելիս անհրաժեշտ է առաջնորդվել www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրի «Օրենսդրություն»» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում տեղադրված էլեկտրոնային գնումների կատարման ուղեցույցով:*

*Ուղեցույցը հասանելի է հետևյալ հղումով՝ http://gnumner.am/hy/page/ughecuycner_dzernarkner/.*

*- համակարգի հետ կապված հարցեր և խնդիրներ առաջանալիս կարող եք դիմել պատվիրատուին, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարություն (այսուհետ նաև՝ լիազորված մարմին)՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան փող. 1 հասցեով (հեռախոս՝(+37411) 28-93-20):*

*Համակարգում գրանցվելը, ինչպես նաև հայտ ներկայացնելն անվճար է:*

## ԲՈՎԱՆԴԱԿՈւԹՅՈւՆ

## ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԹԵԹԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐԻ

### ՄԱՍ I.

1. Գնման առարկայի բնութագիրը
2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները և դրանց գնահատման կարգը, ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում որակավորման ապահովում ներկայացնելու պայմանները
3. Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը
4. Հայտը ներկայացնելու կարգը
5. Հայտի գնային առաջարկը
6. Հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը
7. Հայտի ապահովումը[1]
8. Հայտերի բացումը, գնահատումը և արդյունքների ամփոփումը
9. Պայմանագրի կնքումը
10. Որակավորման և պայմանագրի ապահովումները
11. Ընթացակարգը չկայացած հայտարարելը
12. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը

### ՄԱՍ II. ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ

1. Ընդհանուր դրույթներ
2. Ընթացակարգի հայտը
3. Հավելվածներ 1-6

---

[1] *Կետը, ինչպես նաև հրավերի 1-ին մասի 7-րդ բաժինը հրավերից հանվում է, եթե՝*
*- ընթացակարգը կազմակերպվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, բացառությամբ այն դեպքի, երբ ընթացակարգը կազմակերպելու համար անհրաժեշտ գնման հայտը հաստատվելու օրվա դրությամբ նախատեսված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է 25 մլն. ՀՀ դրամը և կնքվելիք պայմանագրի ամբողջական կատարման համար հետագայում ևս պահանջվելու են ֆինանսական միջոցներ.*
*- գնման հայտով փվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գինը չի գերազանցում 25մլն. ՀՀ դրամը.*
*- գնումն իրականացվում է հրապարակության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ձևով:*
*Սույն պայմանի կիրառման դեպքում խմբագրվում են հրավերի կետերը, բաժինները և դրանց կատարված հղումները:*

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն **ԵՔ-ԲՄԾՁԲ-23/18** ծածկագրով անցկացվող բաց մրցույթի (այսուհետև՝ ընթացակարգ) հայտարարության:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի **Երևանի քաղաքապետարանի** (այսուհետ՝ պատվիրատու) կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետ՝ մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, ընտրված մասնակցին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել համակարգում գրանցված բոլոր անձիք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Համակարգում որպես մասնակից գրանցվելու նպատակով անձը մուտք է գործում www.armeps.am hասցեով գործող ինտերնետային կայք և լրացնում համապատասխան պահանջվող տեղեկատվությունը, որից հետո գրանցումը հաստատելու նպատակով էլեկտրոնային փոստի միջոցով ստացված թվի և (կամ) տառերի կոմբինացիան մուտքագրում է համակարգ: Նշված տեղեկատվությունը ճիշտ մուտքագրելուց հետո անձը համարվում է համակարգում գրանցված մասնակից, ինչի մասին ավտոմատ եղանակով ստանում է ծանուցում: Մասնակցի գրանցումն ավտոմատ եղանակով համարվում է չեղյալ, եթե համակարգում գրանցվելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում վերջինս մուտք չի գործում համակարգ կամ մուտք է գործում, սակայն համակարգ չի մուտքագրում տեղեկատվությունը: Այս պարագայում իրականացվում է գրանցման նոր գործընթաց:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ **ani.hambardzumyan@yerevan.am**:

ՄԱՍ I

## 1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.1 Գնման առարկա է հանդիսանում Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ Երևանի քաղաքապետարանի և Երևանի քաղաքապետարանի ենթակայության հիմնարկների աշխատակիցների համար «Առողջության ապահովագրություն» փաթեթի ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ծառայություն), որը խմբավորված է 1 «մեկ» չափաբաժնում՝

| *Չափաբաժնի* | | | | *Չափաբաժնի անվանումը* |
|---|---|---|---|---|
| *համարը* | *գնման ընդհանուր գինը /ՀՀ դրամ/* | *գնման գինը առկա ֆինանսական միջոցների մասով /ՀՀ դրամ/* | *գնման գինը չնախատեսված ֆինանսական միջոցների մասով /ՀՀ դրամ/* | |
| 1 | Մինչև 883,899,000 | Մինչև 739,233,000 | Մինչև 144,666,000 | *Երևանի քաղաքապեփարանի և Երևանի քաղաքապեփարանի ենթակայության հիմնարկների աշխապակիցների համար «Առողջության ապահովագրություն» փաթեթի ձեռքբերում* |

Ծառայության տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

## 2. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք.

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ.

3) որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող հինգտարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով մարված կամ վերացված է.

4) որոնց վերաբերյալ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության, գերիշխող դիրքի չարաշահման կամ անբարեխիղճ մրցակցության համար պատասխանատվություն սահմանող վարչական ակտը հայտը ներկայացվելու օրվան նախորդող երեք տարվա ընթացքում դարձել է անբողոքարկելի, իսկ բողոքարկված լինելու դեպքում թողնվել է անփոփոխ.

5) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միության անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե մասնակիցը սույն կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով նախատեսված ցուցակներում ներառվել է հայտը ներկայացնելու օրվանից հետո, ապա նրա տվյալ հայտը ենթակա չէ մերժման:

Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև ցուցակ), եթե՝

- խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը.

- որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

2.2 Մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակիցը հայտով պետք է ներկայացնի իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված գրավոր հայտարարություն: Բացի սույն կետով նախատեսված հայտարարությունից մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակցից, այդ թվում ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր կամ հիմնավորումներ չեն կարող պահանջվել: Մասնակցի հայտարարության իսկությունը գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) գնահատում է սույն հրավերով սահմանված պայմաններով:

2.3 Մասնակիցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Արգելվում է սույն կետով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին (միևնույն չափաբաժնին), բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Կարգի 119-րդ կետի իմաստով՝

1) ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք միևնույն ընտանիքի անդամ են, կամ վարում են ընդհանուր տնտեսություն, կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից,

2) ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից, կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելին տնօրինող մասնակից.

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ.

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ.

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ էական ազդեցություն ունի.

3) ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե՝

ա. տվյալ անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) տասը և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները.

բ. նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերը) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն.

գ. նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ.

դ. նրանք գործել կամ գործում են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.

Սույն կետի իմաստով ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, թոռները, քրոջ կամ եղբոր ամուսինն ու երեխաները:

2.4 Մասնակիցը ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է որակավորման ապահովում՝ սույն հրավերով սահմանված կարգով և չափով:

2.5 Սույն ընթացակարգի շրջանակում կնքվելիք պայմանագիրը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ սույն ընթացակարգին (միևնույն չափաբաժնին) մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցը:

2.6 Մասնակիցները կարող են սույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) համատեղ գործունեության պայմանագրի կողմերից որևէ մեկը չի կարող նույն ընթացակարգին (միևնույն չափաբաժնին) ներկայացնել առանձին հայտ: Սույն պարբերության պահանջի չպահպանման դեպքում՝ հայտերի բացման նիստում մերժվում են ինչպես համատեղ գործունեության կարգով, այնպես էլ առանձին ներկայացված հայտերը.

2) Մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

## 3. ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ համակարգի միջոցով հանձնաժողովից պահանջելու հրավերի պարզաբանում: Հանձնաժողովը հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրում է համակարգի միջոցով՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

3.2 Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը պարզաբանումը տրամադրելու օրը հրապարակվում է համակարգում և www.procurement.am հասցեով գործող տեղեկագրի (այսուհետ՝ տեղեկագիր) «Գնումների հայտարարություններ» բաժնի «Հրավերների պարզաբանումների վերաբերյալ հայտարարություններ» ենթաբաժնում՝ առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները:

3.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է սույն հրավերի բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

3.4 Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում համակարգում և տեղեկագրում:

3.5 Յուրաքանչյուր ոք իրավունք ունի մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին ներկայացնել հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ առանց նշելու անունը ազգանունը: Ներկայացված հիմնավորումներն ընդունելի համարվելու դեպքում գնահատող հանձնաժողովը սահմանված ժամկետում դրանցով պայմանավորված փոփոխություններ է կատարում հրավերում:

3.6 Հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին համակարգում և տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից: Այդ դեպքում մասնակիցները պարտավոր են երկարաձգել իրենց ներկայացրած հայտի ապահովման վավերականության ժամկետը կամ ներկայացնել հայտի նոր ապահովում:

## 4. ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը համակարգի միջոցով հանձնաժողովին ներկայացնում է հայտ: Հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Հայտը ներկայացվում է մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Հայտի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի 2-րդ մասում՝ բաց մրցույթի հայտերը պատրաստելու հրահանգում:

4.2 Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել համակարգի միջոցով ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու օրվանից մինչև **2023 թվականի մայիսի 8-ը, ժամը 10:00**-ն: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում համակարգի կողմից:

4.3 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը, որը ներառում է՝

ա) հավաստում սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց տվյալների համապատասխանության մասին.

բ) հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին.

գ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում անբարեխիղճ մրցակցության, գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին.

դ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

ե) իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1-ի: Հայտարարագիր չի ներկայացվում, եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ է: Ընդ որում եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված հայտարարագիրը որը հայտերը բացելուց հետո ավտոմատ եղանակով հրապարակվում է համակարգում, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է նաև տեղեկագրում:[2]

2) իր կողմից հաստատված գնային առաջարկ.

3) հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ.

4) գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով:

5) համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

Ընդ որում համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) սույն ընթացակարգին մասնակցելու դեպքում՝

- համատեղ գործունեության պայմանագրի կողմերից որևէ մեկը չի կարող սույն ընթացակարգին (միևնույն չափաբաժնին) ներկայացնել առանձին հայտ: Սույն պարբերության պահանջի չպահպանման դեպքում հայտերի բացման նիստում մերժվում են ինչպես համատեղ գործունեության կարգով, այնպես էլ առանձին ներկայացված հայտերը.
- եթե համատեղ գործունեության պայմանագրով սահմանված է, որ մասնակիցների ընդհանուր գործերը վարում է համատեղ գործունեության պայմանագրի առանձին մասնակից, ապա հայտը ներկայացվում, իսկ պայմանագիր կնքվելու դեպքում վճարումները կատարվում են այդ մասնակցին: Այն դեպքում, երբ համատեղ գործունեության պայմանագրով նախատեսվում է, որ ընդհանուր գործերը վարելիս յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի գործել բոլոր մասնակիցների անունից, ապա պայմանագիր կնքվելու դեպքում դրա հիման վրա վճարումները կատարվում են հայտը ներկայացրած մասնակցին:

## 5. ՀԱՅՏԻ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ

[2] *ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցների դեպքում հրապարակվում է դիմում հայտարարության մեջ նշված՝ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղմամբ հրապարակված հայտարարագիրը:*

5.1 Առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

5.2 Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում՝

ա) մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման.

Մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և տառերով և թվերով կամ միայն տառերով.

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին.

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված.

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը.

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը.

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

5.3 Եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով և համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր, ինչպես նաև մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել:

## 6. ՀԱՅՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՀԱՅՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6.1 Օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ հայտը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

6.2 Օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ մասնակիցը, մինչև սույն հրավերի 1-ին մասի 4.2 կետում նշված՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

## 7. ՀԱՅՏԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

7.1 Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է **գնման գնի /գնման ընդհանուր գին/ հինգ տոկոսին:** Եթե մասնակցի գնային առաջարկը գերազանցում է գնման գինը, ապա հայտի ապահովման չափը հավասար է գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին, որը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի: Ընդ որում հայտի ապահովումը վերադարձվում է պայմանագիրը կնքվելու օրվան

հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում հայտի ապահովումը վերադարձվում է անգործության ժամկետն ավարտվելուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում, եթե գնման ընթացակարգի արդյունքները բողոքարկված չեն: Բողոքի առկայության դեպքում հայտի ապահովումը վերադարձվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումն անփոփոխ թողնելու մասին դատարանի եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա, հայտի ապահովումը պայմանագիրը կնքած անձին վերադարձվում է ֆինանսական միջոցներ նախատեսված լինելու վերաբերյալ կողմերի միջև համաձայնագիրը կնքվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Եթե պայմանագիր կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում և պայմանագիրը լուծվում է, ապա հայտի ապահովումը վերադարձվում է պայմանագիրը լուծվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[3]

7.2 Գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում, եթե՝

ա. մասնակիցը հայտ ներկայացնում է մեկից ավել չափաբաժինների համար, ապա հայտի ապահովումը կարող է ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ հայտի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ հայտի ապահովում ներկայացվելու դեպքում, դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժիններիգնման գների իսկ գնային առաջարկները գնման գները գերազանցելու դեպքում՝ գնային առաջարկների հանրագումարի նկատմամբ՝ հաշվի առնելով Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության պահանջները :

բ. Մասնակիցը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից որևէ չափաբաժնի մասով, ապա հայտի ապահովումը վճարվում է միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված ապահովման չափով:[4]

7.3 Մասնակիցը վճարում է հայտի ապահովումը, եթե նա՝

1) հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից.

2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ Մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

7.4 Հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 120 (հարյուր քսան) աշխատանքային օր: [5]

7.5 Պատվիրատուի ղեկավարը հայտի ապահովման վճարման պահանջը բանկին, իսկ կանխիկ փողի ձևով ներկայացված ապահովման դեպքում՝ լիազորված մարմնին, ներկայացնում է հայտի ապահովման վճարման հիմքը առաջանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ապահովման վճարման պահանջը բանկի կողմից մերժվում է պահանջը կամ դրան կից փաստաթղթերը ոչ ամբողջական ներկայացված լինելու հիմքով, ապա նոր պահանջը պատվիրատուի ղեկավարը բանկ ներկայացնում է մերժումը ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

7.6 Մասնակցի հայտը ենթակա է մերժման, եթե դրանում բացակայում է հայտի ապահովումը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

## 8. ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ, ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

8.1 Հայտերի բացումը կկատարվի համակարգի միջոցով՝ **2023 թվականի մայիսի 8-ին, ժամը 10:00-ին**:

Հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովի նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման գինը՝ մեկ թվով արտահայտված, ինչպես նաև հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

Համակարգում հանձնաժողովի բացող անդամների գործառույթներն աստիճանակարգված են: Աստիճանակարգումը որոշվում է հանձնաժողովի նախագահի կողմից: Հանձնաժողովի առաջին բացող անդամն իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանն է ներկայացնում բացման ենթակա այն հայտերի ցուցակը, որոնց համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր, որից հետո երկրորդ

---

[3] *7.1 կետի վերջին պարբերությունը հանվում է, եթե գնման ընթացակարգը չի կազմակերպվում Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա:*

[4] *Սույն կետը հրավերից հանվում է, եթե գնման ընթացակարգը չի կազմակերպվում չափաբաժիններով:*

[5] *Եթե ընթացակարգը կազմակերպվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա և գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը գերազանցում է 25 մլն. ՀՀ դրամը, ապա 7.4 կետում « 90 (իննսուն) աշխատանքային օր» բառերը փոխարինվում են «մեկ հարյուր քսան աշխատանքային օր» բառերով:*

բացող անդամը հաստատում է իրեն ներկայացված հայտերի ցուցակը: Հաստատումից հետո բեռնվում է հայտերի բացման մասին արձանագրությունը (համակարգում՝ հաշվետվություն), որը հայտերի բացման օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ուղարկում է մասնակիցների էլեկտրոնային փոստերին:

8.2 Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով:

Գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը յոթանասունհինգը չգերազանցելու դեպքում հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ, իսկ գերազանցելու դեպքում՝ քսան աշխատանքային օրվա ընթացքում:

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկները և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 8.9 կետով սահմանված դեպքի:

8.3 Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման նպատակով հանձնաժողովի նախագահն ավտոմատ եղանակով ստեղծում է հայտերի գնահատման մասին արձանագրություն, որը համակարգում հաստատվում է հանձնաժողովի անդամների կողմից՝ համակարգում նշում կատարելու միջոցով:

8.4 Ընտրված մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներին որոշելիս գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 1-ին մասի 5.2-րդ կետում նշված հարկի գումարի հաշվարկման, իսկ հայտերը գնահատելիս հիմք է ընդունում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

8.5 Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ **հայտերի բացման օրվա ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված** փոխարժեքով:

8.6 Հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում

ա. ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում հավասար գներ ներկայացրած մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են այդմասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը հավասար գներ ներկայացրած մասնակիցներին համակարգի միջոցով՝ ոչ ավտոմատ ծանուցման եղանակով, միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման պայմանների, տևողության, օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակցի համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գներիորոշվում և հայտարարվում են ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցները: Եթե բանակցությունների արդյունքում մասնակիցների ներկայացրած գները մնում են հավասար, գնման ընթացակարգն Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

8.7 Եթե հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների գները գերազանցում են գնման գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ վերջինիս հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում: Ընդ որում, համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ ծառայությունների մատուցման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև համաձայնագրի կնքման օրն ընկած ժամանակահատվածով: Սույն կետի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե կնքելուն հաջորդող վաթսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Սույն կետի պարբերության պահանջները չեն կիրառվում, երբ հայտեր ներկայացրել են մեկից ավել մասնակիցներ և միայն մեկ մասնակցի հայտն է գնահատվել հրավերի պահանջներին բավարար:

Սույն կետի չկիրառման դեպքում ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

8.8 Պահանջի դեպքում որևէ մասնակցի հայտիպատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին: Պահանջի կատարման անհնարինության դեպքում պահանջ ներկայացրած անձին անհապաղ տրամադրվում է հայտում ներառված փաստաթղթերը, որոնց վերջինս ծանոթանում է տեղում, իրավունք ունի լուսանկարել դրանք և վերադարձնում է հանձնաժողովի քարտուղարին նիստի ընթացքում՝ առանց խոչընդոտելու հանձնաժողովի բնականոն գործունեությանը:

8.9 Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ իրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ այն դեպքի, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

8.10 Եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

8.11 Հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը չի կարող մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին, եթե հանձնաժողովի գործունեության ընթացքումպարզվում է, որ վերջիններիս կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը, կամ իրենց մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր,տատ, պապ, թոռ, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) կամ այդ անձի կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը սույն ընթացակարգին մասնակցելու համար ներկայացրել է հայտ: Եթե առկա է սույն կետով նախատեսված պայմանը, ապա սույն ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունեցող հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը անհապաղ ինքնաբացարկ է հայտնում սույնընթացակարգից:
8.12 Հայտերը բացվելուց և գնահատվելուց հետո կազմվում է արձանագրություն՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Ընդ որում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտերի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

8.13 Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝

1) հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը և սույն հրավերի 1-ին մասի 3.5 կետում նշված հիմնավորումների քննարկման ամփոփաթերթը, որը պարունակում է տեղեկություններ նաև հիմնավորումները ստանալու ամսաթվի և էլեկտրոնային փոստի հասցեների վերաբերյալ, հրապարակում է տեղեկագրում: Եթե հիմնավորումներ չեն ներկայացվել, ապա հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ դրա մասին կատարվում են համապատասխան նշումներ.

2) իր և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է տեղեկագրում: Հանձնաժողովի այն անդամները, որոնք հանձնաժողովի աշխատանքների մասնակցում են հայտերի բացման և գնահատման նիստից հետո հրավիրվող նիստերին, ստորագրում են սույն ենթակետում նախատեսված հայտարարությունները, որոնք տեղեկագրում քարտուղարը հրապարակում է ստորագրմանը հաջորդող աշխատանքային օրը.

8.14 Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ

դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Եթե՝

- սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.
- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Ընդ որում եթե մասնակցի գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին դիմում-հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը սույն իրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում իրավերով նախատեսված փաստաթղթերը (այդ թվում շտկման ենթակա) կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովում կամ եթե ընթացակարգը կազմակերպված է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված կարգավորմանը համապատասխան և դրա արդյունքում համաձայնագիր կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը սահմանված ժամկետում միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի (այսուհետ նաև տուժանք) ձևով ներկայացված պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը չի փոխարինում բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնված պարտավորության խախտում:

8.15 Եթե մասնակիցն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ մասերով նախատեսված ցուցակներում ներառվել է հայտը ներկայացնելու օրվանից հետո, ապա նրա տվյալ հայտը ենթակա չէ մերժման:

8.16 Սույն իրավերի 1-ին մասի 8.9 կետում նշված փաստաթղթերը մասնակիցը սահմանված ժամկետում հանձնաժողովի քարտուղարին ներկայացնում է վերջինիս՝ սույն իրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով: Քարտուղարը պարտավոր է փաստաթղթերն ստանալու օրը հաստատել դրանց ստանալու հանգամանքը՝ սույն իրավերում նշված իր էլեկտրոնային փոստից մասնակցի էլեկտրոնային փոստին հավաստում ուղարկելու միջոցով:

8.17 Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա լինել հանձնաժողովի նիստերին: Մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները կարող են պահանջել հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ օրացուցային օրվա ընթացքում:

8.18 Հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից սույն իրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայտում ներառվող՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվող փաստաթղթերը չեն կնքվում:

8.20 Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը՝ սույն իրավերի 1-ին մասի 8.13-ից 8.19-րդ կետերով սահմանված ընթացակարգի կիրառմամբ:

8.21 Մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

Հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության

ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

8.22 Սույն հրավերի 1-ին մասի 8.21 կետի կիրառման նպատակով կարող է հրավիրվել հանձնաժողովի արտահերթ նիստ:

8.23 Ընտրված մասնակցին որոշելու նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝

1) Համակարգում նշում է ընթացակարգի բավարար գնահատված մասնակիցներին՝ նրանց դասակարգելով ըստ գնահատման արդյունքների և գնային առաջարկների.

2) Համակարգի միջոցով ընթացակարգի մասնակիցների էլեկտրոնային փոստին ուղարկում է գնահատման արդյունքների մասին հանձնաժողովի նիստի արձանագրությունը:

8.24 Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ:

8.25 Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում « 10 » օրացուցային օր է: Անգործության ժամկետը կիրառելի.

- չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր,

- է նաև այն դեպքում, երբ միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, և այն մերժվել է: Սույն կետի կիրառման դեպքում անգործության ժամկետը սահմանվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությամբ:

Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն կետով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

9.1 Պայմանագիր կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

9.2 Սույն հրավերի 1-ին մասի 8.25 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն հրավերի 1-ին մասի 8.25 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող չորրորդ աշխատանքային օրը:

9.3 Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:

9.4 Պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:

9.5 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո ՝ սույն հրավերի 10.1 կետով նախատեսված ժամկետում, իսկ կնքվելիք պայմանագրի նախագծով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումները, իսկ կնքվելիք պայմանագրի նախագծով կանխավճար նախատեսված լինելու և ընտրված մասնակցի կողմից այդ պայմանն ընդունվելու դեպքում նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: :

Ընդ որում ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում և հաստատմանը հաջորդող աշխատանքային օրը ուղեկցող գրությամբ տրամադրվում է ընտրված մասնակցին:

9.6 Պայմանագիր կնքելու վերաբերյալ պատվիրատուի առաջարկը ստացած ընտրված մասնակիցը համակարգի միջոցով ընդունում կամ մերժում է իրեն ներկայացված առաջարկը:

9.7 Մինչև սույն հրավերի 1-ին մասի 9.5 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

9.8 Պայմանագիրը կնքվելուն հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգում ավարտում է ընթացակարգը:

## 10. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄՆԵՐԸ

10.1 Որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումներ: Եթե ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 10 աշխատանքային օր: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է որակավորման և պայմանագրի (կանխավճարի) ապահովումները:[6]

10.2 Որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի **երեսուն** տոկոսին: Որակավորման ապահովումը (չնախատեսված գումարի մասով) ներկայացվում է տուժանքի մասին համաձայնության (հավելված 4.2), իսկ (նախատեսված գումարի մասով) կանխիկ փողի, կամ բանկերի կողմից տրամադրված երաշխիքների ձևով: Ընդ որում ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև պայմանագրի կատարման արդյունքը պատվիրատուից կողմից ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող 90-րդ աշխատանքային օրը ներառյալ[7.1]:

Եթե գնման ընթացակարգը կազմակերպված է չափաբաժիններով և մասնակիցը ընտրված մասնակից է ճանաչվում մեկից ավելի չափաբաժինների մասով ապա կարող է ներկայացնել՝ ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ որակավորման ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ որակավորման ապահովում ներկայացվելու դեպքում դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնման գների հանրագումարի նկատմամբ ՝ հաշվի առնելով Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության պահանջները: Կանխիկ փողի ձևով ներկայացված որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին:

Որակավորման ապահովումը այն ներկայացնողին վերադարձվում է պայմանագրի կատարման արդյունքը պատվիրատուի կողմից ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Եթե պայմանագրի կատարումը փուլային է և յուրաքանչյուր փուլի կատարումը ուղղակիորեն փոխկապակցված չէ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան ստացվելիք վերջնարդյունքի հետ, ապա յուրաքանչյուր փուլի արդյունքը պատվիրատուի կողմից ընդունվելուց հետո որակավորման ապահովման գումարը նվազեցվում է այդ փուլի գումարի նկատմամբ հաշվարկված համամասնությամբ:
Բանկային երաշխիքի ձևով որակավորման ապահովումը ընտրված մասնակիցը ներկայացնում է հավելված 4-ի համաձայն:[8]

---

[6] *10.1 կետից հանվում է << Եթե ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 10 աշխատանքային օր:>> նախադասությունը, եթե*
*- գնման հայտով տվյալ չափաբաժնի գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը և նախատեսված չէ կանխավճար*
*- ընթացակարգը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, բացառությամբ այն դեպքի, երբ ընթացակարգը կազմակերպելու համար անհրաժեշտ գնման հայտը հաստատվելու օրվա դրությամբ նախատեսված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է 25 մլն. ՀՀ դրամը և կնքվելիք պայմանագրի ամբողջական կատարման համար հետագայում ևս պահանջվելու են ֆինանսական միջոցներ, կամ երբ գնման հայտը հաստատվելու օրվա դրությամբ նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակում նախատեսվում է կանխավճարի տրամադրում:*

[7.1] *Եթե գնման հայտով տվյալ չափաբաժնի գինը.*
*- չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը և գնման առարկա չեն հանդիսանում շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունները ,ապա սույն պարբերությունից հանվում են << կամ բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքների >> բառերը.*
*-- չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, բայց ավելի է քսանհինգապատիկից, կամ պակաս է քսանհինգապատիկից, սակայն գնման առարկա են հանդիսանում շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունները, ապա սույն պարբերությունից հանվում են << տուժանքի (հավելված 4.2) կամ >> բառերը, իսկ <<20>> թիվը փոխարինվում է <<90>> թվով,*
*- գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա սույն պարբերությունից հանվում է << տուժանքի (հավելված 4.2) կամ >> բառերը, <<15>> թիվը փոխարինվում է <<30>> թվով, իսկ <<20>> թիվը` <<90>> թվով,*

[8] *Եթե՝*
*- տվյալ ընթացակարգի շրջանակում չի կիրառվում 10.2 կետի 4-րդ պարբերությամբ սահմանված կարգավորումը, ապա տվյալ պարբերությունը հանվում է հրավերից, իսկ 5-րդ պարբերությունից հանվում է "կամ հավելված 4.1" բառերը.*
*- տվյալ ընթացակարգի շրջանակում կիրառվում է 10.2 կետի 4-րդ պարբերությամբ սահմանված կարգավորումը, ապա 4-րդ և 5-րդ պարբերությունների փոխարեն սահմանվում է հետևյալ պայմանը՝ "Պայմանագրի կատարման յուրաքանչյուր փուլի արդյունքն ընդունվելուց*

Ընդ որում, եթե ծառայությունների գնման պայմանագրերը կնքվում են Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա առկա ֆինանսական հատկացումների շրջանակում տվյալ տարվա համար կնքված համաձայնագրի (համաձայնագրերի) մասով ներկայացված որակավորման ապահովումը ենթակա է վերադարձման այդ համաձայնագիրը (համաձայնագրերը) կատարողի կողմից ողջ ծավալով պատշաճ կատարվելու և դրա արդյունքը պատվիրատուի կողմից ամբողջական ընդունվելու դեպքում:
Որակավորման ապահովումը չի վերադարձվում, եթե այն ներկայացրած անձը խախտում է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցնում է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

10.3. Պայմանագրի ապահովման չափը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը: Պայմանագրի ապահովումը (չնախատեսված գումարի մասով) ներկայացվում է տուժանքի մասին համաձայնության (հավելված 5.1), իսկ (նախատեսված գումարի մասով) ներկայացվում է բանկային երախիքի (հավելված 5) կամ կանխիկ փողի ձևով:[13]

Եթե գնման ընթացակարգը կազմակերպված է չափաբաժիններով և մասնակիցը ընտրված մասնակից է ճանաչվում մեկից ավելի չափաբաժինների մասով ապա կարող է ներկայացնել՝ ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ պայմանագրի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ պայմանագրի ապահովում ներկայացվելու դեպքում դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնման գների հանրագումարի նկատմամբ՝ հաշվի առնելով Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի պահանջները:

Պայմանագրի ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև կնքվելիք պայմանագրով սահմանվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող 90-րդ աշխատանքային օրը ներառյալ: Պայմանագրի ապահովումը այն ներկայացրած անձին վերադարձվում է կնքված պայմանագրով ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման դեպքում՝ ամբողջական պարտավորությունների կատարման ժամկետը լրանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000664» գանձապետական հաշվին:

10.4 Եթե գնման ընթացակարգը կազմակերպված է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Եթե պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին՝

նախատեսված ֆինանսական միջոցները գերազանցում են 25 մլն. ՀՀ դրամը, սակայն պայմանագրի ամբողջական կատարման համար հետագայում ևս պահանջվում են ֆինանսական միջոցներ, ապա պայմանագրի և որակավորման ապահովումները, հատկացված ֆինանսական միջոցների մասով, ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի, իսկ պահանջվող ֆինանսական միջոցների մասով՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

10.5 Եթե չափաբաժիններով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով որևէ չափաբաժնի մասով լուծվում է, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները վճարվում են միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված գումարի չափով:

10.6 Պատվիրատուի ղեկավարը պայմանագրի և որակավորման ապահովման վճարման պահանջը բանկին, իսկ կանխիկ փողի ձևով ներկայացված ապահովման դեպքում՝ լիազորված մարմնին, ներկայացնում է ապահովման վճարման հիմքը առաջանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ապահովման վճարման պահանջը բանկի կողմից մերժվում է պահանջը կամ դրան կից փաստաթղթերը ոչ ամբողջական ներկայացված լինելու հիմքով, ապա նոր պահանջը պատվիրատուի ղեկավարը բանկ ներկայացնում է մերժումը ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

## 11. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

11.1 Օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

---

*հետո որակավորման ապահովման գումարը նվազեցվում է այդ փուլի գումարի նկատմամբ հաշվարկված համամասնությամբ: Երաշխիքի ձևով որակավորման ապահովումը ընտրված մասնակիցը ներկայացնում է 4.1 հավելվածի համաձայն: " , իսկ հավելված 4-ը հրավերից հանվում է .*

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը: Ընդ որում պետության կամ համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում՝ ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա,

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում:

Սույն ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, եթե սույն ընթացակարգի շրջանակում սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու պահի դրությամբ էլեկտրոնային գնումների համակարգը խափանված է:

11.2 Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում, պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

## 12. ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ (ԿԱՄ) ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ՄԱՍՆԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԿԱՐԳԸ

12.1 Յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) սահմանված կարգով:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի Օրենսգրքով սահմանված կարգով մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը բողոքարկելու գնման առարկայի բնութագրերը կամ հրավերի պահանջները:

12.2. Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

12.3. Պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կատարած գործողության կամ անգործության հետևանքով պատճառված վնասները հատուցվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

12.4. Սույն հրավերով սահմանված անգործության ժամկետը պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հայցային վաղեմության ժամկետ է, բացառությամբ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման և պայմանագիրը միակողմանի լուծելու հետ կապված վեճերի, որոնց դեպքում հայցային վաղեմության ժամկետը երեսուն օրացուցային օր է:

12.5.Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը քննվում և լուծվում են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

12.6. Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

12.7. Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

12.8. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն կետով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

12.9. Դատարանը սույն գնման գործընթացին վերաբերող՝ սույն բաժնով նախատեսված վեճերի վերաբերյալ իր վարույթում քննվող գործերը միացնում է մեկ վարույթում:

12.10. Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինը սույն կետով նախատեսված որոշումն անհապաղ հրապարակում է տեղեկագրում՝ նշելով կասեցման օրը:

12.11. Հայցադիմումի պատասխանը պատվիրատուն ներկայացնում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

12.12 Գործին մասնակցող անձինք և նրանց ներկայացուցիչները դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև Օրենսգրքով նախատեսված դեպքերում առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին ծանուցվում են էլեկտրոնային հաղորդակցության միջոցով ծանուցագրերը և այլ փաստաթղթեր Օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված կարգով հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստին ուղարկելու եղանակով:

12.13. Դատարանը սույն բաժնով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

12.14. Գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի լրանալը:

12.15. Գործը դատական նիստում քննելու մասին դատարանը կայացնում է որոշում հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

12.16. Գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

12.17. Վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:

12.18. Պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:

12.19 . Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն հրավերի 12.10 կետով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

12.20. Այն դեպքերում, երբ, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, դատարանը Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարների, իսկ իրավաբանական անձանց դեպքում գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում: Դատարանը սույն կետով նախատեսված որոշումը դրա կայացման օրն անհապաղ ուղարկում է լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինն այդ որոշումն անհապաղ հրապարակում է տեղեկագրում:

12.21. Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

12.22. Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի վճռի եզրափակիչ մասը կամ այլ եզրափակիչ դատական ակտը դրա հրապարակման օրն ուղարկվում է լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինը դատարանի վճռի եզրափակիչ մասը կամ այլ եզրափակիչ դատական ակտն անհապաղ հրապարակում է տեղեկագրում:

12.23. Բողոքարկման համար գանձվող պետական տուրքերի դրույքաչափերը սահմանված են «Պետական տուրքի մասին» օրենքով:

# ՄԱՍ II
# ՀՐԱՀԱՆԳ
# ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել մասնակիցներին հայտը պատրաստելիս:

1.2 Նպատակահարմարության դեպքում մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

1.3 Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ

Ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը համակարգի միջոցով ներկայացնում է հայտ: Հայտին կցվում են սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը (տեղեկությունները):

Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

**1) «Պիտանելիության չափորոշիչ».**

2.1 ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1-ի.

2.2 գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

2.3 համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).[9]

**2.4 հայտի ապահովում, որը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով (հավելված N 3): Ընդ որում հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթից կամ բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ**

**2) «Ֆինանսական չափորոշիչ»**.

2.5 գնային առաջարկ՝ համաձայն հավելված N 2-ի: Գնային առաջարկը ներկայացվում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

2.6 Սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

2.7 Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

---

[9] *Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից:*

**Հավելված N 1**
**ԵՔ-ԲՄԾՁԲ-23/18 ծածկագրով**
**բաց մրցույթի հրավերի**

# ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*
## բաց մրցույթին մասնակցելու

______________________________________________ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել
մասնակցի անվանումը

Երևանի քաղաքապետարանի կողմից ԵՔ-ԲՄԾՁԲ-23/18 ծածկագրով հայտարարված

բաց մրցույթին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

__________________________________________-ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է
մասնակցի անվանումը

__________________________________________ռեզիդենտ:
երկրի անվանումը

_____________________-ի՝
մասնակցի անվանումը

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ ___________________________.
  հարկ վճարողի հաշվառման համարը
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ ______________________________.
  էլեկտրոնային փոստի հասցեն
- գործունեության հասցեն է՝ ________________________________________.
  գործունեության հասցեն

հեռախոսահամարն է՝ ________________________________________________.
հեռախոսի համարը

Սույնով ________________________________________-ն հայտարարում և հավաստում է, որ՝
մասնակցի անվանում

1) ______________________________________________-ն և իրեն փոխկապակցված անձինք
մասնակցի անվանում

բավարարում են ԵՔ-ԲՄԾՁԲ-23/18 ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և ________________________________________-ն պարտավորվում է ընտրված
մասնակցի անվանում

մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում .

2) ԵՔ-ԲՄԾՁԲ-23/18 ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն, գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է հրավերով սահմանված՝ ____________________________________-ին
  մասնակցի անվանումը

փոխկապակցված անձանց և (կամ) ______________________________________________-ի
մասնակցի անվանումը

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս ______________________________________-ին
մասնակցի անվանումը

պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

**Ստորև ներկայացնում է_______________________-ի իրական շահառուների վերաբերյալ**

մասնակցի անվանումը

**տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝ ------------------------------------------------------------------**

______________________________________________ ______________________

Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը)

Կ. Տ.

**լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

***** - ՀՀ ռեզիդենտ հանդիասցող մասնակիցը դիմում հայտարարությունը լրացնելիս նշում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի համաձայն՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցած՝ իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝***
***- եթե մասնակիցը չի հանդիսանում ՀՀ ռեզիդենտ, ապա դիմում- հայտարարությունը լրացնելիս << տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝ >> բառերը փոխարինում է <<հայտարարագիր՝ համաձայն հավելված 1,2-ի>> բառերով,***
***-եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր է կամ Ֆիզիկական անձ, ապա իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացնում:***

**Հավելված 1.2****
***ԵՔ-ԲՄԾՁԲ-23/18* ծածկագրով**
**բաց մրցույթի հրավերի**

ՁԵՎ
ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ

**1. Կազմակերպությունը**

*1.1. Կազմակերպության տվյալները*

| | |
|---|---|
| 1.1.1. Անվանումը | |
| 1.1.2. Անվանումը լատինատառ | |
| 1.1.3. Պետական գրանցման համարը | |
| 1.1.4. Գրանցման օրը, ամիսը, տարին | |
| 1.1.5. Գրանցման հասցեն | |
| 1.1.6. Գրանցման պետությունը | |
| 1.1.7. Գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը | |

*1.2. Հայտարարագիրը ներկայացնող անձը*

| | |
|---|---|
| 1.2.1. Հայտարարագիրը ներկայացնող անձի անունը և ազգանունը | |
| 1.2.2. Հայտարարագիրը ներկայացնող անձի պաշտոնը | |

*1.3. Հայտարարագրի ներկայացումը*

| | |
|---|---|
| 1.3.1. Հայտարարագրի ստորագրման օրը, ամիսը, տարին | |

| | |
|---|---|
| 1.3.2. Հայտարարագրի էջերի քանակը | |
| 1.3.3. Հայտարարագիրը ներկայացնող անձի ստորագրությունը | |

**2. Բաժնետոմսերի ցուցակման տվյալները**

*2.1. Բաժնետոմսերի ցուցակման տվյալները*

| | |
|---|---|
| 2.1.1. Ֆոնդային բորսայի անվանումը | |
| 2.1.2. Հղումը բորսայում առկա փաստաթղթերին | |

*2.2. Կազմակերպությունը վերահսկող իրավաբանական անձի տվյալները*

| | |
|---|---|
| 2.2.1. Անվանումը | |
| 2.2.2. Անվանումը լատինատառ | |
| 2.2.3. Պետական գրանցման համարը | |
| 2.2.4. Գրանցման օրը, ամիսը, տարին | |
| 2.2.5. Գրանցման հասցեն | |
| 2.2.6. Գրանցման պետությունը | |
| 2.2.7. Գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը | |

*2.3. Վերահսկողության մակարդակը*

| | |
|---|---|
| 2.3.1. Մասնակցության չափը (%) | |
| 2.3.2. Մասնակցության տեսակը | ☐ Ուղղակի մասնակցություն<br>☐ Անուղղակի մասնակցություն |

## 3. Պետության, համայնքի կամ միջազգային կազմակերպության մասնակցությունը

*3.1. Պետության կամ համայնքի մասնակցությունը*

| | |
|---|---|
| 3.1.1. Պետության անվանումը | |
| 3.1.2. Համայնքի անվանումը | |
| 3.1.3. Մասնակցության չափը (%) | |
| 3.1.4. Մասնակցության տեսակը | ☐ Ուղղակի մասնակցություն<br>☐ Անուղղակի մասնակցություն |

*3.2. Միջազգային կազմակերպության մասնակցությունը*

| | |
|---|---|
| 3.2.1. Միջազգային կազմակերպության անվանումը | |
| 3.2.2. Միջազգային կազմակերպության անվանումը լատինատառ | |
| 3.2.3. Մասնակցության չափը (%) | |
| 3.2.4. Մասնակցության տեսակը | ☐ Ուղղակի մասնակցություն<br>☐ Անուղղակի մասնակցություն |

**4. Իրական շահառուի տվյալները**

*4.1. Անձի ինքնությունը հավաստող տվյալները*

| | |
|---|---|
| 4.1.1. Անունը | |
| 4.1.2. Ազգանունը | |
| 4.1.3. Անունը (լատինատառ) | |
| 4.1.4. Ազգանունը (լատինատառ) | |
| 4.1.5. Քաղաքացիությունը | |
| 4.1.6. Ծննդյան օրը, ամիսը, տարին | |

*4.2. Անձը հաստատող փաստաթուղթը*

| | |
|---|---|
| 4.2.1. Փաստաթղթի տեսակը | |
| 4.2.2. Փաստաթղթի համարը | |
| 4.2.3. Տրամադրման օրը, ամիսը, տարին | |
| 4.2.4. Տրամադրող մարմինը | |
| 4.2.5. ՀԾՀ կամ համարժեք համարը | |

*4.3. Անձի հաշվառման հասցեն*

| | |
|---|---|
| 4.3.1. Պետությունը | |
| 4.3.2. Համայնքը | |
| 4.3.3. Վարչատարածքային միավորը | |

| | |
|---|---|
| 4.3.4. Փողոցի անվանումը, շենքը (տունը), բնակարանը | |

*4.4. Անձի բնակության հասցեն*

| | |
|---|---|
| 4.4.1. Պետությունը | |
| 4.4.2. Համայնքը | |
| 4.4.3. Վարչատարածքային միավորը | |
| 4.4.4. Փողոցի անվանումը, շենքը (տունը), բնակարանը | |

*4.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)*

| | |
|---|---|
| ☐ ա. ուղղակի կամ անուղղակի տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում | |
| 4.5.1. Մասնակցության չափը (%) | |
| 4.5.2. Մասնակցության տեսակը | ☐ Ուղղակի մասնակցություն<br>☐ Անուղղակի մասնակցություն |
| ☐ բ. տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով | |
| ☐ գ. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ «ա» և «բ» կետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ | |

*4.6. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների համար)*

| | |
|---|---|
| ☐ ա. ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 10 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 10 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում | |
| 4.6.1. Մասնակցության չափը (%) | |
| 4.6.2. Մասնակցության տեսակը | ☐ Ուղղակի մասնակցություն<br>☐ Անուղղակի մասնակցություն |
| ☐ բ. իրավունք ունի նշանակելու կամ հեռացնելու իրավաբանական անձի կառավարման մարմինների անդամների մեծամասնությանը | |
| ☐ գ. իրավաբանական անձից անհատույց ստացել է հաշվետու տարվան նախորդող տարվա ընթացքում տվյալ իրավաբանական անձի ստացած շահույթի առնվազն 15 տոկոսի չափով օգուտ | |
| ☐ դ. իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով | |
| ☐ ե. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ «ա»-«դ» կետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ | |

*4.7. Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները*

| | |
|---|---|
| 4.7.1. Իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին | |
| 4.7.2. Կազմակերպության նկատմամբ վերահսկողության իրականացումը | ☐ Առանձին<br>☐ Փոխկապակցված անձանց հետ համատեղ |
| 4.7.3. Ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպության իրական շահառուն հանդիսանում է | ☐ Այո<br>☐ Ոչ |

| | |
|---|---|
| պաշտոնատար անձ կամ նրա ընտանիքի անդամ | |

*4.8.Իրական շահառուի կոնտակտային տվյալները*

| | |
|---|---|
| 4.8.1. Էլ. փոստի հասցեն | |
| 4.8.2. Հեռախոսահամարը | |

## 5. Միջանկյալ իրավաբանական անձինք

*5.1. Կազմակերպության տվյալները*

| | |
|---|---|
| 5.1.1. Անվանումը | |
| 5.1.2. Անվանումը լատինատառ | |
| 5.1.3. Պետական գրանցման համարը | |
| 5.1.4. Գրանցման օրը, ամիսը, տարին | |
| 5.1.5. Գրանցման հասցեն | |
| 5.1.6. Գրանցման պետությունը | |
| 5.1.7. Գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը | |

*5.2.Իրական շահառուի տվյալները*

| | |
|---|---|
| 5.2.1. Իրական շահառու(ներ)ի անունը և ազգանունը, ում համար կազմակերպությունը հանդիսանում է միջանկյալ իրավաբանական անձ | |
| | |
| | |
| | |
| | |

*5.3.Միջանկյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի ցուցակման տվյալները*

| | |
|---|---|
| 5.3.1. Ֆոնդային բորսայի անվանումը | |
| 5.3.2. Հղումը բորսայում առկա փաստաթղթերին | |

## 6. Լրացուցիչ նշումներ

| *Լրացուցիչ տեղեկություններ կամ հավելյալ պարզաբանումներ, որոնք առնչվում են հայտարարագրում լրացված կամ լրացման ենթակա փվյալներին* |
| --- |
| |

## I. Հայտարարագրի լրացման կարգը

1. Հայտարարագրի 1-ին բաժնում (Կազմակերպությունը) լրացվում են հայտարարագիր ներկայացնող իրավաբանական անձի (այսուհետ՝ Կազմակերպություն) տվյալները: Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով.

1) «Կազմակերպության տվյալները» ենթաբաժնում լրացվում են Կազմակերպության անվանումը (այդ թվում՝ լատինատառ) և պետական գրանցման տվյալները՝ ներառյալ նշում կազմակերպաիրավական ձևի մասին.

2) «Հայտարարագիրը ներկայացնող անձը» ենթաբաժնում լրացվում է այն ֆիզիկական անձի տվյալները ով ստորագրում է սույն ընթացակարգի հայտում ներառվող փաստաթղթերը.

3) «Հայտարարագրի ներկայացումը» ենթաբաժնում լրացվում են հայտարարագրի ստորագրման օրը, ամիսը, տարին, հայտարարագրի էջերի քանակը, ինչպես նաև դրվում է հայտարարագիրը ներկայացնող անձի ստորագրությունը:

2. Հայտարարագրի 2-րդ բաժինը (Բաժնետոմսերի ցուցակման տվյալները) լրացվում է, եթե Կազմակերպության կամ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող այլ իրավաբանական անձի բաժնետոմսերը ցուցակված են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից հաստատված՝ իրական շահառուների համարժեք բացահայտման չափանիշներով կարգավորվող շուկաների ցանկում ներառված շուկայում: Նշված չափանիշներին համապատասխանելու դեպքում այս բաժինը լրացվում է Կազմակերպության կամ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող այլ իրավաբանական անձի համար: Այս բաժինը լրացնելու դեպքում հայտարարագրի հաջորդ բաժինները ենթակա չեն լրացման, բացառությամբ 5-րդ բաժնի, որը լրացվում է, եթե Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձը Կազմակերպության կանոնադրական կապիտալում ունի անուղղակի մասնակցություն: Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով.

1) «Բաժնետոմսերի ցուցակման տվյալները» ենթաբաժնում լրացվում է ֆոնդային բորսայի անվանումը՝ փակագծերում նշելով նաև բորսայի ծածկագիրը (Market Identifier Code), որտեղ ցուցակված են Կազմակերպության կամ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող այլ իրավաբանական անձի բաժնետոմսերը, ինչպես նաև կատարվում է հղում բորսայում առկա փաստաթղթերին՝ առկայության դեպքում այն փաստաթղթերին, որոնք

պարունակում են տեղեկություններ տվյալ իրավաբանական անձի սեփականատերերի վերաբերյալ.

2) «Կազմակերպությունը վերահսկող իրավաբանական անձի տվյալները» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագրի 2.1-ին ենթաբաժնում լրացված տվյալները վերաբերում են ոչ թե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձին, այլ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող այլ իրավաբանական անձի: Այս ենթաբաժնում լրացվում են Կազմակերպությունը վերահսկող իրավաբանական անձի անվանումը (այդ թվում՝ լատինատառ) և գրանցման տվյալները՝ ներառյալ նշում կազմակերպաիրավական ձևի մասին, ինչպես նաև գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը.

3) «Վերահսկողության մակարդակը» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագրի 2.1-ին ենթաբաժնում լրացվել են Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձին վերաբերող տվյալները: Այս ենթաբաժնում նշվում է Կազմակերպության կանոնադրական կապիտալում Կազմակերպությունը վերահսկող իրավաբանական անձի մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ, ինչպես նաև մասնակցության տեսակը: Կանոնադրական կապիտալում մասնակցության չափի և տեսակի վերաբերյալ նշումները կատարվում են սույն կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված կանոնների հաշվառմամբ:

3. Հայտարարագրի 3-րդ բաժինը (Պետության, համայնքի կամ միջազգային կազմակերպության մասնակցությունը) լրացվում է, եթե Կազմակերպության կանոնադրական կապիտալում ուղղակի կամ անուղղակի մասնակցություն ունի որևէ պետություն, համայնք կամ միջազգային կազմակերպություն: Բաժինը կարող է լրացվել մի քանի անգամ, եթե Կազմակերպության կանոնադրական կապիտալում ուղղակի կամ անուղղակի մասնակցություն ունեն մի քանի պետություն, համայնք կամ միջազգային կազմակերպություն: Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով.

1) «Պետության կամ համայնքի մասնակցությունը» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում առկա է պետության կամ համայնքի ուղղակի կամ անուղղակի մասնակցություն: Պետության մասնակցության դեպքում այս ենթաբաժնում լրացվում է պետության, իսկ համայնքի մասնակցության դեպքում՝ նաև համայնքի անվանումը: Այս ենթաբաժնում լրացվում են նաև իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում պետության կամ համայնքի

մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ, ինչպես նաև մասնակցության տեսակը: Կանոնադրական կապիտալում մասնակցության չափի և տեսակի վերաբերյալ նշումները կատարվում են սույն կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված կանոնների հաշվառմամբ.

2) «Միջազգային կազմակերպության մասնակցությունը» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում առկա է միջազգային կազմակերպության ուղղակի կամ անուղղակի մասնակցություն: Այս ենթաբաժնում լրացվում են միջազգային կազմակերպության անվանումը (այդ թվում՝ լատինատառ), իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում միջազգային կազմակերպության մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ, ինչպես նաև մասնակցության տեսակը: Կանոնադրական կապիտալում մասնակցության չափի և տեսակի վերաբերյալ նշումները կատարվում են սույն կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված կանոնների հաշվառմամբ:

4. Հայտարարագրի 4-րդ բաժինը (Իրական շահառուի տվյալները) լրացվում է յուրաքանչյուր իրական շահառուի համար առանձին՝ Կազմակերպության իրական շահառուների քանակով: Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով.

1) «Անձի ինքնությունը հավաստող տվյալները» ենթաբաժնում լրացվում են իրական շահառուի անձնական տվյալները: Տվյալները լրացվում են այնպես, ինչպես դրանք լրացված են իրական շահառուի անձը հաստատող փաստաթղթում: Եթե անձի անունը և ազգանունը հայերեն կամ լատինատառ առկա չեն վերջինիս անձը հաստատող փաստաթղթում, ապա հայտարարագրում լրացվում է դրանց տառադարձությունը.

2) «Անձը հաստատող փաստաթուղթը» ենթաբաժնում լրացվում են տեղեկությունների իրական շահառուի անձը հաստատող փաստաթղթի վերաբերյալ.

3) «Անձի հաշվառման հասցեն» ենթաբաժնում լրացվում է իրական շահառուի հաշվառման վայրի հասցեն.

4) «Անձի բնակության հասցեն» ենթաբաժինը լրացվում է, եթե իրական շահառուի հաշվառման հասցեն տարբերվում է վերջինիս բնակության հասցեից: Այս ենթաբաժնում լրացվում է իրական շահառուի բնակության վայրի հասցեն.

5) «Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձը չի հանդիսանում

ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն: Այս ենթաբաժնում նշվում է, թե «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» մասին օրենքով նախատեսված որ հիմք(եր)ով է անձը հանդիսանում Կազմակերպության իրական շահառու, և ներառվում են այդ հիմքերի առնչությամբ պահանջվող տեղեկությունները: Մեկից ավելի հիմքերով իրական շահառու հանդիսանալու դեպքում նշում է կատարվում բոլոր հիմքերի մասով՝ համապատասխան կետերում: Այս ենթաբաժնում հիմքերի վերաբերյալ տվյալները լրացվում են հետևյալ կանոններով.

ա. Այս ենթաբաժնի «**ա**» կետում կատարվում է նշում, եթե ֆիզիկական անձը ուղղակի կամ անուղղակի տիրապետում է Կազմակերպության՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն Կազմակերպության կանոնադրական կապիտալում: Մասնակցությունը կարող է լինել Կազմակերպության բաժնեմասը (բաժնետոմսը, փայը) սեփականության իրավունքով տիրապետելու ուժով (ուղղակի մասնակցություն) կամ Կազմակերպության բաժնեմասին (բաժնետոմսին, փային) տիրապետող այլ իրավաբանական անձի բաժնեմասը (բաժնետոմսը, փայը) սեփականության իրավունքով տիրապետելու ուժով (անուղղակի մասնակցություն): Անուղղակի մասնակցությունը կարող է իրականացվել անկախ ֆիզիկական անձի և Կազմակերպության բաժնեմասը (բաժնետոմսը, փայը) տիրապետող իրավաբանական անձի շղթայում առկա միջանկյալ իրավաբանական անձանց քանակից: «Մասնակցության չափը» դաշտում նշվում է Կազմակերպության կանոնադրական կապիտալում մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ: Մասնակցության չափը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով իրական շահառուի ուղղակի և անուղղակի մասնակցության արդյունքում Կազմակերպության կանոնադրական կապիտալում մասնակցության բոլոր տոկոսների հանրագումարը: Անուղղակի մասնակցության դեպքում, կազմակերպության կանոնադրական կապիտալում իրական շահառուի մասնակցությունը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր նախորդ միջանկյալ կազմակերպության մասնակցության չափը, այն է՝ Կազմակերպության մասնակից իրավաբանական անձի՝ տոկոսային արտահայտմամբ մասնակցության չափը բազմապատկելով Կազմակերպության մասնակից իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համապատասխան մասնակցի՝ տոկոսային արտահայտմամբ մասնակցության չափով, և այդպես շարունակ մինչև իրական շահառուին հասնելը: «Մասնակցության տեսակը» դաշտում կատարվում է նշում կանոնադրական կապիտալում մասնակցության ուղղակի կամ անուղղակի լինելու մասին: Կանոնադրական կապիտալում և՛ ուղղակի, և՛ անուղղակի մասնակցության առկայության դեպքում նշում է

կատարվում միաժամանակ և՛ ուղղակի, և՛ անուղղակի մասնակցության առկայության վերաբերյալ.

բ. Այս ենթաբաժնի «**բ**» կետում կատարվում է նշում, եթե անձն «ա» կետի իմաստով չի հանդիսանում կազմակերպության իրական շահառու, սակայն վերահսկում է Կազմակերպությունը՝ իրավական գործիքների (այդ թվում՝ կնքված գործարքների) ուժով, այլ բնույթի անձնական ազդեցության հիման վրա կամ այլ միջոցներով.

գ. Այս ենթաբաժնի «**գ**» կետում կատարվում է նշում, եթե անձը հանդիսանում է Կազմակերպության գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ այս ենթաբաժնի «ա» և «բ» կետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ.

6) «Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների համար)» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձը հանդիսանում է ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն: Իրական շահառուների բացահայտումն իրականացվում է Ընդերքի մասին օրենսգրքով սահմանված չափանիշներով: Այս ենթաբաժնում նշումները կատարվում են սույն կարգի 4.5-րդ կետում սահմանված կանոնների հաշվառմամբ: Այս ենթաբաժնում հիմքերի վերաբերյալ տվյալները լրացվում են հետևյալ կանոններով.

ա. Այս ենթաբաժնի «**ա**» կետում կատարվում է նշում, եթե ֆիզիկական անձը ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 10 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 10 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում: Այս ենթաբաժինը լրացվում է սույն կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված կանոնների հաշվառմամբ.

բ. Այս ենթաբաժնի «**բ**» կետում կատարվում է նշում, եթե անձն իրավունք ունի նշանակելու կամ հեռացնելու իրավաբանական անձի կառավարման մարմինների անդամների մեծամասնությանը.

գ. Այս ենթաբաժնի «**գ**» կետում կատարվում է նշում, եթե անձը Կազմակերպությունից անհատույց ստացել է հաշվետու տարվան նախորդող տարվա ընթացքում տվյալ իրավաբանական անձի ստացած շահույթի առնվազն 15 տոկոսի չափով օգուտ.

դ. Այս ենթաբաժնի «**դ**» կետում կատարվում է նշում, եթե անձն «ա»-«գ» կետերի իմաստով չի հանդիսանում Կազմակերպության իրական շահառու, սակայն վերահսկում է

կազմակերպությունը՝ իրավական գործիքների (այդ թվում՝ կնքված գործարքների) ուժով, այլ բնույթի անձնական ազդեցության հիման վրա կամ այլ միջոցներով.

ե. Այս ենթաբաժնի «**ե**» կետում կատարվում է նշում, եթե անձը հանդիսանում է Կազմակերպության գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ այս ենթաբաժնի «ա»-«դ» կետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ.

7) «Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները» ենթաբաժնում լրացվում են անձի՝ Կազմակերպության իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին: Այս ենթաբաժնում կատարվում է նշում իրական շահառուի կողմից Կազմակերպության նկատմամբ վերահսկողության իրականացման ձևի վերաբերյալ: Փոխկապակցված անձանց հետ համատեղ վերահսկողության իրականացման վերաբերյալ կատարվում է նշում, եթե իրական շահառուն Կազմակերպությունը վերահսկում է իր հետ փոխկապակցված անձի հետ համաձայնեցված գործելու ուժով կամ կարող է այն վերահսկել իր հետ փոխկապակցված անձի հետ համաձայնեցված գործելու դեպքում: Եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձը հանդիսանում է ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն, այս ենթաբաժնում նաև կատարվում է նշում իրական շահառուի՝ Ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 53-րդ կետի իմաստով պաշտոնատար անձ կամ նրա ընտանիքի անդամ հանդիսանալու վերաբերյալ.

8) «Իրական շահառուի կոնտակտային տվյալները» ենթաբաժնում լրացվում են իրական շահառուի էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը:

5. Հայտարարագրի 5-րդ բաժինը (Միջանկյալ իրավաբանական անձինք) լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձի իրական շահառուն կամ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձն ունի անուղղակի մասնակցություն Կազմակերպության կանոնադրական կապիտալում: Այս բաժինը ենթակա է լրացման յուրաքանչյուր միջանկյալ իրավաբանական անձի համար առանձին՝ բոլոր միջանկյալ իրավաբանական անձանց քանակով: Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով.

1) «Կազմակերպության տվյալները» ենթաբաժնում լրացվում են միջանկյալ իրավաբանական անձի անվանումը (այդ թվում՝ լատինատառ) և գրանցման տվյալները՝ ներառյալ նշում կազմակերպաիրավական ձևի մասին.

2) «Իրական շահառուի տվյալները» ենթաբաժնում լրացվում են այն իրական շահառու(ներ)ի անունը և ազգանունը, ում համար այս ենթաբաժնում լրացված կազմակերպությունը հանդիսանում է միջանկյալ իրավաբանական անձ: Եթե միջանկյալ իրավաբանական անձանց տվյալները լրացվում են Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձի համար, այս ենթաբաժինը ենթակա չէ լրացման:

3) «Միջանկյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի ցուցակման տվյալները» ենթաբաժինը ենթակա չէ պարտադիր լրացման: Այս ենթաբաժինը կարող է լրացվել, եթե միջանկյալ իրավաբանական անձի բաժնետոմսերը ցուցակված են կարգավորվող շուկայում: Այս ենթաբաժնում լրացվում է ֆոնդային բորսայի անվանումը՝ փակագծերում նշելով նաև բորսայի ծածկագիրը (Market Identifier Code), որտեղ ցուցակված են իրավաբանական անձի բաժնետոմսերը, ինչպես նաև կատարվում է հղում բորսայում առկա փաստաթղթերին:

6. Հայտարարագրի 6-րդ բաժինը (Լրացուցիչ նշումներ) լրացվում է, եթե առկա են լրացուցիչ տեղեկություններ կամ հավելյալ պարզաբանումներ, որոնք առնչվում են հայտարարագրում լրացված կամ լրացման ենթակա տվյալներին: Այս ենթաբաժնում կարող են լրացվել հավելյալ պարզաբանումներ իրական շահառուի կողմից Կազմակերպությունը վերահսկելու հիմքերի վերաբերյալ, պետության (համայնքի) այն մարմինների վերաբերյալ, որոնք իրականացնում են Կազմակերպության վերահսկողությունն այն դեպքում, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում առկա է պետության կամ համայնքի ուղղակի կամ անուղղակի մասնակցություն, և այլ պարազաբանումներ հայտարարագրի առնչությամբ:

7. Հայտարարագիրը լրացնում և ստորագրում է հայտը ներկայացնող անձը: Հայտարարագրի էջերի համարակալումը և հայտարարագրում էջերի քանակի մասին նշում կատարելը պարտադիր չէ:

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

*** 1.2 հավելվածը չի ներկայացվում մասնակցի կողմից եթե վերջինս հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ, ինչպես նաև եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր է կամ ֆիզիկական անձ:*

**Հավելված 2**
**ԵՔ-ԲՄԾՁԲ-23/18 ծածկագրով**
**բաց մրցույթի հրավերի**

# Գ Ն Ա Յ Ի Ն   Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով ԵՔ-ԲՄԾՁԲ-23/18 ծածկագրով բաց մրցույթի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, ______________________________________________-ն առաջարկում է

մասնակցի անվանումը

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

| **Չափա-բաժինների համարներ ը** | **Ծառայության անվանումը** | **Արժեք** (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) **/տառերով և թվերով/** | **ԱԱՀ** /տառերով և թվերով/** | **Ընդհանուր գինը /տառերով և թվերով/** |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | Երևանի քաղաքապետարանի և Երևանի քաղաքապետարանի ենթակայության հիմնարկների աշխատակիցների համար «Առողջության ապահովագրություն» փաթեթի ձեռքբերում | | | |

______________________________________________ ______________

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ.

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

***եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

**Հավելված 3**
**ԵՔ-ԲՄԾՁԲ-23/18 ծածկագրով**
**բաց մրցույթի հրավերի**

**ԵՐԱՇԽԻՔ N __________**

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է __________________________________
պատվիրատուի անվանումը

(այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ______________________________________ ծածկագրով կազմակերպված
ընթացակարգի ծածկագիրը

գնման ընթացակարգին ________________________________________ (այսուհետ՝ պրինցիպալ) մասնակցելուց
մասնակցի անվանումը

բխող՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով ______________________________________________ (այսուհետ՝ երաշխիք տվող
երաշխիքը տվող բանկի անվանումը

անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել _________________________
գումարը թվերով և տառերով

(այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի կողմից _____________________________________ ծածկագրով
ընթացակարգի ծածկագիրը

կազմակերպված գնման ընթացակագին մասնակցելու նպատակով պրինցիպալի կողմից հայտը ներկայացնելու օրվանից հաշված հարյուր քսան աշխատանքային օր: Սույն երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝առանց գումարի չափի մասին նշման, երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում է հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուցհետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր մարմնի ղեկավար ____________________________

____________________________________________________________________
ամիսը, ամսաթիվը, տարեթիվը

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

*** Եթե ընթացակարգը կազմակերպվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա և գնման հայտով տրվող ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը գերազանցում է 25 մլն. ՀՀ դրամը, ապա « իննսուն աշխատանքային օր» բառերը փոխարինվում են «մեկ հարյուր քսան աշխատանքային օր» բառերով:*

**Հավելված 4**
**ԵՔ-ԲՄԾՁԲ-23/18 ծածկագրով**
**բաց մրցույթի հրավերի**

**ԵՐԱՇԽԻՔ N _________**
**(որակավորման ապահովում)**

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է _______________________________
պատվիրատուի անվանումը

(այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ____________________________________ ծածկագրով կազմակերպված
ընթացակարգի ծածկագիրը

գնման ընթացակարգի արդյունքում _________________________________________
ընտրված մասնակցի անվանումը

(այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N_______________________________________________________
կնքվելիք պայմանագրի համարը

պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով ____________________________________________ (այսուհետ՝ երաշխիք տվող
երաշխիքը տվող բանկի անվանումը

անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել ______________________________
գումարը թվերով և տառերով

(այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5 . Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N ________________________________
կնքվելիք պայմանագրի համարը

ծածկագրով կնքվելիք պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև______________________________
կնքվելիք պայմանագրով նախատեսված

_____________________________________________________________________________________
ծառայության մատուցման վերջնաժամկետը

օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով:

Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ___________________________________ ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում
կնքվելիք պայմանագրի համարը

կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուցհետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր մարմնի ղեկավար ___________________________

_________________________________________________________________

ամիսը, ամսաթիվը, տարեթիվը

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

**Հավելված 4.1**
**ԵՔ-ԲՄԾՁԲ-23/18 ծածկագրով**
**բաց մրցույթի հրավերի**

**ԵՐԱՇԽԻՔ N _________**
**(որակավորման ապահովում)**

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ________________________________
պատվիրատուի անվանումը

(այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ________________________________ ծածկագրով կազմակերպված
ընթացակարգի ծածկագիրը

գնման ընթացակարգի արդյունքում ________________________________
ընտրված մասնակցի անվանումը

(այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N________________________________
կնքվելիք պայմանագրի համարը

պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով ________________________________ (այսուհետ՝ երաշխիք տվող
երաշխիքը տվող բանկի անվանումը

անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել ________________
գումարը թվերով և տառերով

(այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Երաշխիքի գումարը վճարելուց հաշվի է առնվում պայմանագրի կատարման շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված և պրինցիպալի կողմից երաշխիքը տված անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա երաշխիքի գումարից կատարված նվազեցումները:

Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N ________________________________
կնքվելիք պայմանագրի համարը

ծածկագրով կնքվելիք պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ________________________________
________________________________ կնքվելիք պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման վերջնաժամկետը,

օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ________________________________ ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում
կնքվելիք պայմանագրի համարը

կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր մարմնի ղեկավար ________________________

________________________________________________
ամիսը, ամսաթիվը, տարեթիվը

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

**Հավելված 4.2**
**ԵՔ-ԲՄԾՁԲ-23/18 ծածկագրով**
**բաց մրցույթի հրավերի**

**ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**
**(որակավորման ապահովում)**

ք. Երևան «______»____________________ 20 թ.

________________________, ի դեմս Ընկերության տնօրեն ____________________________________________
Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

## 1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ________________________________* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից
պատվիրատուի անվանումը
կազմակերպված՝ ԵՔ-ԲՄԾՁԲ-23/18 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

________________________________________

ընկերության անվանումը

________________________________________

ընկերության հասցեն

________________________________________

ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

________________________________________

ընկերության բանկային հաշվեհամարը

________________________________________

ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

________________________________________

ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

Օր/ամիս/տարի

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

| 1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*** | |
|---|---|
| 2. Թիվ | |
| 3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. | |
| 4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ | |
| 5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն ( բանկ)՝ | |
| 6. Վճարողի հաշվի համարը՝ | |
| 7. Վճարողի ՀՎՀՀ՝ | |
| 8. Վճարողի ՀԾՀ՝ | |
| 9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ Երևանի քաղաքապետարան | |
| 10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում) | |
| 11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108 | |
| 12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան | |
| 13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900015211429 | |
| 14.Գումարը (թվերով և բառերով)՝ | |
| 15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում) | |
| 16.Արժույթը (բառերով և կոդով)՝ | |
| 17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(որակավորման ապահովման համար)* | |
| 18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը | |
| 19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում> | |
| 20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ | |
| 22.ա. Շահառուի ստորագրությունները<br>/____________________/<br>/____________________/<br>22.բ.<br>Կ.Տ. | 21.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>/____________________/<br>/____________________/<br>21.բ. Կ.Տ. |
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/____________________/<br>/ստորագրություն/ | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/____________________/<br>/ստորագրություն/ |

| | |
|---|---|
| 24.բ. Կ.Տ. | 23.բ. Կ.Տ. |
| 24.գ "___" ___ 20___ թ. | 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |

** Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

**Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման ուղեցույցը**

| Հ/Հ | **<<Վճարման պահանջագիր>> փաստաթղթի վավերապայմանները** | **Նշված դաշտի/ վավերապայմանի առկայությունը փաստաթղթում** | **Վավերապայմանի լրացման պահանջը (գնումների գործընթացի հետ կապված)** | **Վավերապայմանը լրացնող կողմը՝ շահառուն կամ վճարողը (գնումների գործընթացի հետ կապված)** |
|---|---|---|---|---|
| **1** | **2** | **3** | **4** | **5** |
| 1. | Փաստաթղթի անվանումը | պարտադիր | պարտադիր | Փաստաթղթի վրա նախապես լրացված է <Վճարման պահանջագիր> |
| 2. | վճարման պահանջագրի համարը | պարտադիր | պարտադիր | լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս |
| 3. | ներկայացման ամսաթիվը | պարտադիր | պարտադիր | լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը: |
| 4. | Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է այն անձի (վճարողի) անունը, որի հաշվից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը: Լրացվում է վճարողի անունը, ազգանունը, եթե այն ֆիզիկական անձ է կամ անվանումը, եթե այն իրավաբանական անձ է: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության: Լրացվում է վճարողի կողմից | լրացվում է վճարողի կողմից |
| 5. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը (վճարողի բանկը) | պարտադիր | պարտադիր | լրացվում է վճարողի կողմից |
| 6. | վճարողի հաշվի համարը | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է վճարողի բանկային հաշվի համարը իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպությունում (մասնաճյուղի), որից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը | լրացվում է վճարողի կողմից |
| 7. | վճարողի ՀՎՀՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է հաշվառված հարկատու | լրացվում է վճարողի կողմից |
| 8. | վճարողի ՀԾՀ | պարտադիր | ոչ պարտադիր | լրացվում է վճարողի կողմից |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է ֆիզիկական անձ | |
| 9. | շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառու հանդիսացող անձի (վճարումը ստացողի) անվանումը: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 10. | շահառուի ՀԾՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>(գնումների հետ կապված գործընթացում չի լրացվում) | (չի լրացվում) |
| 11. | շահառուի ՀՎՀՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ շահառուն հանդիսանում է հաշվառված հարկատու | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 12. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) անվանումը | պարտադիր | պարտադիր | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 13. | շահառուի հաշվի համարը | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառուի այն բանկային (գանձապետական) հաշվի համարը, որի վրա պետք է փոխանցվեն վճարողից գանձված միջոցները | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 14. | գումարը (թվերով և բառերով) | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառուին վճարման ենթակա գումարը | լրացվում է վճարողի կողմից |
| 15. | Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) | պարտադիր | ոչ պարտադիր<br>(նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը գնումների հետ կապված չի կիրառվում) | (չի լրացվում եւ չի կիրառվում) |
| 16. | արժույթը (բառերով և կոդով) | պարտադիր | պարտադիր | լրացվում է վճարողի կողմից |
| 17. | գործարքի նպատակը | պարտադիր | Պարտադիր լրացվում է «որակավորման ապահովման համար» բառերը | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 18. | Վճարման կատարման հիմքերը՝ | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է պահանջագրով նշված գումարի գանձման և շահառուին վճարման համար հիմք հանդիսացող փաստաթղթի տվյալները, որոնց հիման վրա շահառուն վճարման պահանջագիր է ներկայացնում վճարողին սպասարկող բանկին | լրացվում է շահառուի կողմից |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | լրացվում է պահանջագրի ներկայացման համար հիմք հանդիսացող պայմանագրի համարը, գնման ընթացակարգի ծածկագիրը ըստ տուժանքի մասին համաձայնագրի, | |
| 19. | Վճարման պայմանները՝ | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է <ակցեպտավորված վճարում> բառերը,<br>որը նշանակում է որ վճարողը ստորագրելով պահանջագիրը նախապես տալիս է իր համաձայնությունը նշված գումարը իր հաշվից գանձելու համար | նախապես լրացվում է շահառուի կողմից |
| 20. | առդիր էջերի քանակը | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է պահանջագրին կից ներկայացված փաստաթղթերի էջերի քանակը, որոնք պետք է տրամադրվեն վճարողին (վճարողի բանկին)<br>Եթ ե լրացվել է <Վճարման կատարման հիմքեր> դաշտը ապա այս տվյալը պարտադիր լրացվում է: | լրացվում է շահառուի կողմից |
| 21.ա. | վճարողի ստորագրությունը | պարտադիր | պարտադիր<br>այս դաշտը լրացվում է վճարողի կողմից պահանջագրի ներկայացման դեպքում: Ընդ որում եթե Վճարման պայմաններ դաշտում նշված է <ակցեպտավորված վճարում> ապա վճարողը ստորագրելով՝ նախապես համաձայնվում նշված գումարը իր հաշվից գանձելու համար: Վճարողի կողմից էլեկտրոնային եղանակով պահանջագրի ներկայացման դեպքում այս դաշտում դրվում է վճարողի էլեկտրոնային ստորագրությունը: | ստորագրվում է վճարողի կողմից կամ<br>դրվում է վճարողի էլեկտրոնային ստորագրությունը |
| 21.բ. | վճարողի կնիքը | պարտադիր | պարտադիր՝<br>կնիքի առկայության դեպքում, երբ վճարողը պահանջագիրը ներկայացնում է թղթային եղանակով | կնքվում է վճարողի կողմից<br>թղթային եղանակով ներկայացնելիս |
| 22.ա. | շահառուի ստորագրությունը | պարտադիր | Պարտադիր՝<br>լրացվում է բանկ ներկայացնելիս | ստորագրվում է շահառուի կողմից |
| 22.բ. | շահառուի կնիքը | պարտադիր | պարտադիր՝<br>կնիքի առկայության դեպքում | կնքվում է շահառուի կողմից<br>թղթային եղանակով բանկ ներկայացնելիս |
| 23.ա. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությա | պարտադիր | պարտադիր<br>վճարման պահանջագիրը վճարողին սպասարկող ֆինանսական | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ն (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը | | կազմակերպությանը թղթային եղանակով ներկայացված լինելու դեպքում | |
| 23.բ. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) դրոշմակնիքը | պարտադիր | պարտադիր վճարման պահանջագիրը վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությանը թղթային եղանակով ներկայացված լինելու դեպքում | |
| 23.գ | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) կողմից կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն | պարտադիր | պարտադիր վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից պարտադիր նշվում է պահանջագրի կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն | |
| 24.ա. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը | պարտադիր | ոչ պարտադիր լրացվում է վճարման պահանջագիրը շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությանը ներկայացվելու դեպքում, որտեղ աշխատակցի ստորագրությունը դրվում է թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա | |
| 24.բ. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) դրոշմակնիքը | պարտադիր | ոչ պարտադիր լրացվում է վճարման պահանջագիրը վերջինիս ներկայացվելու դեպքում, որտեղ դրոշմակնիքը դրվում է թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա | |
| 24.գ | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն ամսաթիվը, ժամը, րոպեն | պարտադիր | ոչ պարտադիր լրացվում է վճարման պահանջագիրը վերջինիս ներկայացվելու դեպքում, որտեղ սույն տվյալները դրվում են թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա | |

**Հավելված 5**
**ԵՔ-ԲՄԾՁԲ-23/18 ծածկագրով**
**բաց մրցույթի հրավերի**

**ԵՐԱՇԽԻՔ N _________**
**(պայմանագրի ապահովում)**

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ______________________________________
պատվիրատուի անվանումը

(այսուհետ՝ բենեֆիցիար) և _________________________________________________________ (այսուհետ՝ պրինցիպալ) միջև
ընտրված մասնակցի անվանումը

կնքվելիք N ____________________________________________ պայմանագրից բխող պրինցիպալի
կնքվելիք պայմանագրի համարը

պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով ______________________________________________ (այսուհետ՝ երաշխիք տվող
երաշխիքը տվող բանկի անվանումը

անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել ________________________
գումարը թվերով և տառերով

(այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքվելիքN ______________________
կնքվելիք պայմանագրի համարը

պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ___________________________________________________
կնքվելիք պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման վերջնաժամկետը, ________________________________________
ներառյալ երաշխիքային ժամկետը

օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ____________________________________________ պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված
կնքվելիք պայմանագրի համարը

փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր մարմնի ղեկավար ________________________

ամիսը, ամսաթիվը, տարեթիվը

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

**Հավելված 5.1**
**ԵՔ-ԲՄԾՁԲ-23/18 ծածկագրով**
**բաց մրցույթի հրավերի**

**ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**
**(պայմանագրի ապահովում)**

ք. Երևան «______»______________________ 20 թ.

__________________________, ի դեմս Ընկերության տնօրեն ______________________________________________
Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

**1. Համաձայնության առարկան**

1.1 Ընկերությունը մասնակցում է ___________________________________* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից
պատվիրատուի անվանումը
կազմակերպված՝ **ԵՔ-ԲՄԾՁԲ-23/18** ծածկագրով գնման ընթացակարգ

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

### 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

______________________________

ընկերության անվանումը

______________________________

ընկերության հասցեն

______________________________

ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

______________________________

ընկերության բանկային հաշվեհամարը

______________________________

ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

______________________________

ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

Օր/ամիս/տարի

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը փեղեկագրում հրապարակելը:*

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն ( բանկ)՝

6. Վճարողի հաշվի համարը՝

7. Վճարողի ՀՎՀՀ՝

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ Երևանի քաղաքապետարան

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900015211429

14.Գումարը (թվերով և բառերով)՝

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարմանապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները

/____________________/

/____________________/

22.բ.

Կ.Տ.

21.ա. Վճարողի ստորագրությունները՝

/____________________/

/____________________/

21.բ. Կ.Տ.

24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն

/____________________/

/ստորագրություն/

23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն

/____________________/

/ստորագրություն/

| | |
|---|---|
| 24.բ. Կ.Տ. | 23.բ. Կ.Տ. |
| 24.գ "___" ___ 20___ թ. | 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |

** Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

**Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման ուղեցույցը**

| Հ/Հ | <<Վճարման պահանջագիր>> փաստաթղթի վավերապայմանները | Նշված դաշտի/ վավերապայմանի առկայությունը փաստաթղթում | Վավերապայմանի լրացման պահանջը (գնումների գործընթացի հետ կապված) | Վավերապայմանը լրացնող կողմը՝ շահառուն կամ վճարողը (գնումների գործընթացի հետ կապված) |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Փաստաթղթի անվանումը | պարտադիր | պարտադիր | Փաստաթղթի վրա նախապես լրացված է <Վճարման պահանջագիր> |
| 2. | վճարման պահանջագրի համարը | պարտադիր | պարտադիր | լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս |
| 3. | ներկայացման ամսաթիվը | պարտադիր | պարտադիր | լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը: |
| 4. | Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն | պարտադիր | պարտադիր լրացվում է այն անձի (վճարողի) անունը, որի հաշվից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը: Լրացվում է վճարողի անունը, ազգանունը, եթե այն ֆիզիկական անձ է կամ անվանումը, եթե այն իրավաբանական անձ է: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության: Լրացվում է վճարողի կողմից | լրացվում է վճարողի կողմից |
| 5. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը (վճարողի բանկը) | պարտադիր | պարտադիր | լրացվում է վճարողի կողմից |
| 6. | վճարողի հաշվի համարը | պարտադիր | պարտադիր լրացվում է վճարողի բանկային հաշվի համարը իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպությունում (մասնաճյուղի), որից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը | լրացվում է վճարողի կողմից |
| 7. | վճարողի ՀՎՀՀ | պարտադիր | ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է հաշվառված հարկատու | լրացվում է վճարողի կողմից |
| 8. | վճարողի ՀԾՀ | պարտադիր | ոչ պարտադիր | լրացվում է վճարողի կողմից |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է ֆիզիկական անձ | |
| 9. | շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառու հանդիսացող անձի (վճարումը ստացողի) անվանումը: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 10. | շահառուի ՀԾՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>(գնումների հետ կապված գործընթացում չի լրացվում) | (չի լրացվում) |
| 11. | շահառուի ՀՎՀՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ շահառուն հանդիսանում է հաշվառված հարկատու | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 12. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) անվանումը | պարտադիր | պարտադիր | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 13. | շահառուի հաշվի համարը | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառուի այն բանկային (գանձապետական) հաշվի համարը, որի վրա պետք է փոխանցվեն վճարողից գանձված միջոցները | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 14. | գումարը (թվերով և բառերով) | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառուին վճարման ենթակա գումարը | լրացվում է վճարողի կողմից |
| 15. | Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) | պարտադիր | ոչ պարտադիր<br>(նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը գնումների հետ կապված չի կիրառվում) | (չի լրացվում եւ չի կիրառվում) |
| 16. | արժույթը (բառերով և կոդով) | պարտադիր | պարտադիր | լրացվում է վճարողի կողմից |
| 17. | գործարքի նպատակը | պարտադիր | Պարտադիր լրացվում է «պայմանագրի կատարման ապահովման համար» բառերը | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 18. | Վճարման կատարման հիմքերը՝ | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է պահանջագրով նշված գումարի գանձման և շահառուին վճարման համար հիմք հանդիսացող փաստաթղթի տվյալները, որոնց հիման վրա շահառուն վճարման պահանջագիր է ներկայացնում վճարողին սպասարկող բանկին | լրացվում է շահառուի կողմից |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | լրացվում է պահանջագրի ներկայացման համար հիմք հանդիսացող պայմանագրի համարը, գնման ընթացակարգի ծածկագիրը ըստ տուժանքի մասին համաձայնագրի, | |
| 19. | Վճարման պայմանները՝ | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է <ակցեպտավորված վճարում> բառերը,<br>որը նշանակում է որ վճարողը ստորագրելով պահանջագիրը նախապես տալիս է իր համաձայնությունը նշված գումարը իր հաշվից գանձելու համար | նախապես լրացվում է շահառուի կողմից |
| 20. | առդիր էջերի քանակը | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է պահանջագրին կից ներկայացված փաստաթղթերի էջերի քանակը, որոնք պետք է տրամադրվեն վճարողին (վճարողի բանկին)<br>Եթ ե լրացվել է <Վճարման կատարման հիմքեր> դաշտը ապա այս տվյալը պարտադիր լրացվում է: | լրացվում է շահառուի կողմից |
| 21.ա. | վճարողի ստորագրությունը | պարտադիր | պարտադիր<br>այս դաշտը լրացվում է վճարողի կողմից պահանջագրի ներկայացման դեպքում: Ընդ որում եթե Վճարման պայմաններ դաշտում նշված է <ակցեպտավորված վճարում> ապա վճարողը ստորագրելով՝ նախապես համաձայնվում նշված գումարը իր հաշվից գանձելու համար: Վճարողի կողմից էլեկտրոնային եղանակով պահանջագրի ներկայացման դեպքում այս դաշտում դրվում է վճարողի էլեկտրոնային ստորագրությունը: | ստորագրվում է վճարողի կողմից կամ<br>դրվում է վճարողի էլեկտրոնային ստորագրությունը |
| 21.բ. | վճարողի կնիքը | պարտադիր | պարտադիր՝<br>կնիքի առկայության դեպքում, երբ վճարողը պահանջագիրը ներկայացնում է թղթային եղանակով | կնքվում է վճարողի կողմից<br>թղթային եղանակով ներկայացնելիս |
| 22.ա. | շահառուի ստորագրությունը | պարտադիր | Պարտադիր՝<br>լրացվում է բանկ ներկայացնելիս | ստորագրվում է շահառուի կողմից |
| 22.բ. | շահառուի կնիքը | պարտադիր | պարտադիր՝<br>կնիքի առկայության դեպքում | կնքվում է շահառուի կողմից<br>թղթային եղանակով բանկ ներկայացնելիս |
| 23.ա. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությա | պարտադիր | պարտադիր<br>վճարման պահանջագիրը վճարողին սպասարկող ֆինանսական | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ն (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը | | կազմակերպությանը թղթային եղանակով ներկայացված լինելու դեպքում | |
| 23.բ. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) դրոշմակնիքը | պարտադիր | պարտադիր<br>վճարման պահանջագիրը վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությանը թղթային եղանակով ներկայացված լինելու դեպքում | |
| 23.գ | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) կողմից կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն | պարտադիր | պարտադիր<br>վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից պարտադիր նշվում է պահանջագրի կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն | |
| 24.ա. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է վճարման պահանջագիրը շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությանը ներկայացվելու դեպքում, որտեղ աշխատակցի ստորագրությունը դրվում է թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա | |
| 24.բ. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) դրոշմակնիքը | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է վճարման պահանջագիրը վերջինիս ներկայացվելու դեպքում, որտեղ դրոշմակնիքը դրվում է թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա | |
| 24.գ | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն ամսաթիվը, ժամը, րոպեն | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է վճարման պահանջագիրը վերջինիս ներկայացվելու դեպքում, որտեղ սույն տվյալները դրվում են թղթային եղանակով ներկայացված պահանջագրի վրա | |

**Հավելված 6**
**ԵՔ-ԲՄԾՁԲ-23/18 ծածկագրով**
**բաց մրցույթի հրավերի**

# ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
**N ____________________**

ք. ______ «___» ______ 20 թ.

«____________________________________», ի դեմս ----------------------- -ի, որը գործում է ------------ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և -----------------ն, ի դեմս տնօրեն ------------------------ի, որը գործում է ------------------ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևանի քաղաքապետարանի և Երևանի քաղաքապետարանի ենթակայության հիմնարկների աշխատողների համար «Առողջության ապահովագրություն» փաթեթի ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:[10]

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է ______ (____տառերով____________________________________) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ

սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[11] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում

---

[11] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[12]

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[13]

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի

---

[12] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[13] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն /չնախատեսված ֆինանսական միջոցների մասով / իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը /չնախատեսված ֆինանսական միջոցների մասով / Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[14]

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| **Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ** | **Կ Ա Տ Ա Ր Ո Ղ** |
|---|---|
| --------------------------------------------- | --------------------------------------------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

---

[14] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 4-րդ նախադասությունը, իսկ 5-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

*Հավելված N 1*
*«      »             20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Առողջության ապահովագրության ծառայությունների ձեռքբերման | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միա-վորը | ընդհանուր գինը /մինչև ՀՀ դրամ/<br><br>միավորի գինը /մինչև ՀՀ դրամ/ | ընդ-հանուր քանակը /մարդ/ | ժամկետը<br>1.ձեռք բերման<br>2.մատուցման |
| 1 | 66511120/1<br>66511120/502 | **I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**<br>Նախատեսված բժշկական ծախսերը հատուցվում են ողջամիտ չափով՝ պայմանով, որ իրականացված բուժումը և /կամ բուժական միջոցները իրավասու բժշկական մարմինների կողմից ճանաչվում են որպես անհրաժեշտ՝ տվյալ հիվանդության, վնասվածքի կամ բժշկական վիճակի համար:<br>Ապահովագրության տարածք՝ ՀՀ, ԱՀ:<br>**ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ.**<br>**II. ՏԱՐԵԿԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ**<br>Իրականացվում է Պայմանագրի գործողության ընթացքում տարեկան մեկ անգամ Ապահովագրողի կողմից ընտրված Բժշկական հաստատություններում.<br>✓ Արյան ընդհանուր հետազոտություն լեյկոֆորմուլայով,<br>✓ Արյան բիոքիմիական հետազոտություն /գլյուկոզա, պրոթրոմբինային ինդեքս, խոլեստերին/,<br>✓ Մեզի ընդհանուր հետազոտություն,<br>✓ Գործիքային քննություն (ԷՍԳ),<br>✓ Որովայնի և փոքր կոնքի ուլտրաձայնային հետազոտություններ,<br>✓ Ակնաբույժի խորհրդատվություն, տեսողության ստուգում, անհրաժեշտության դեպքում՝ ակնոցի դուրս գրում,<br>✓ Թերապևտի խորհրդատվություն, անհրաժեշտության դեպքում թերապևտի ուղեգրմամբ նեղ մասնագետների խորհրդատվություններ,<br>✓ Վահանաձև գեղձի ուլտրաձայնային հետազոտություն,<br>✓ Կրծքագեղձի ուլտրաձայնային հետազոտություն, մինչև 35 տարեկան կանաց բժշկի ցուցմամբ, իսկ 35 և ավել տարիքի կանաց՝ առանց | դրամ | 883,899,000<br><br>57000 | մինչև 15507 | 1. Ծառայության ձեռքբերման նախընտրելի ժամկետ է սահմանվում պայմանագիրը /ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո համաձայնագիրը/ ուժի մեջ մտնելու օրվանից 21-րդ օրացուցային օրը<br>2. Ծառայություններ մատուցման ժամկետ է սահմանվում առողջության ապահո-վագրության վկայագրի տրամադրման օրվանից հետո մինչև 365 օր |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ցուցման /պարտադիր/, բժշկի նշանակման դեպքում՝ մամոգրաֆիական հետազոտություն<br>✓ Պրոստատ-սպեցիֆիկ անտիգենը (prostate specific antigene, PSA) արյան հետազոտություն՝ 40 տարեկան և ավել տղամարդկանց համար<br>✓ PAP-թեստ 35 տարեկան և ավել կանանց համար:<br>Ընդ որում, ապահովել կանխարգելիչ հետազոտության անցկացումը առնվազն 5 բժշկական կենտրոններում: Ապահովագրական ընկերությունը իրավունք չունի ապահովադիրներին (ապահովագրված անձանց)՝ պարտադրելու օգտվել ապահովագրական ընկերության կողմից նախընտրելի հիվանդանոցային կամ արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունից:<br>**III. ՇՏԱՊ ԵՎ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ**<br>✓ Շտապօգնության խմբի այց, այդ թվում՝ մասնագիտացված,<br>✓ Անհետաձգելի ախտորոշիչ-բուժական միջոցառումների իրականացում<br>✓ Անհետաձգելի բուժման դեղորայքի ապահովում<br>**IV. ԱՄԲՈՒԼԱՏՈՐ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ**<br>✓ Թերապևտի և նեղ-մասնագետների խորհրդատվություն (այդ թվում՝ բացառություն հանդիսացող հիվանդությունների և վիճակների գծով առաջնային խորհրդատվությունները), բուժման նշանակում<br>✓ Թերապևտիկ և վիրաբուժական հիվանդությունների բուժում ամբուլատոր պայմաններում<br>✓ Լաբորատոր և գործիքային հետազոտություններ՝ որոնք ցուցված են բժշկի կողմից և իրականացվում են հիվանդությունների հայտնաբերման, աստիճանի որոշման և դիֆերենցիալ դիգնոստիկայի (այդ թվում բացառություն հանդիսացող հիվանդությունների հայտնաբերմանն ուղղված) նպատակով<br>**V. ՍՏԱՑԻՈՆԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ**<br>✓ Դժբախտ պատահարների հետևանքով հոսպիտալացում և բուժում<br>✓ Թերապևտիկ և վիրաբուժական (այդ թվում լապարասկոպիկ և էնդոսկոպիկ) հիվանդությունների բուժում<br>✓ Ստացիոնար պայմաններում բուժում պահանջող հիվանդությունների բուժում (այրվածք, վնասվածք, թունավորում և այլն)<br>✓ Ինտենսիվ թերապիա և ռեանիմացիոն միջոցառումներ պահանջող անհետաձգելի վիճակների բուժում<br>✓ Լաբորատոր և գործիքային ախտորոշիչ հետազոտությունների իրականացում: Անգիոգրաֆիկ հետազոտությունները, այդ թվում՝ | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | պլանային կորոնարոգրաֆիկ հետազոտության ,հատուցում նույնիսկ այն դեպքում, երբ այդ հետազոտությանը չի հաջորդում ծրագրով նախատեսված վիրահատական միջամտություն<br>✓ Մետաղական կոնստրուկցիաներ և էնդոպրոթեզներ, որոնք կիրառվում են վնասվածքաբանական վիրարահատությունների ժամանակ<br>✓ Սրտանոթային վիրահատություններ և միջամտություններ.<br>➢ Կորոնար զարկերակների ստենտավորում (դեղապատ և/կամ ոչ դեղապատ ստենտով)<br>➢ Անգիոպլաստիկա դեղապատ բալոնով<br>➢ Աորտակորոնար շունտավորում<br>➢ Աորտայի պրոթեզավորում (անհետաձգելի դեպքերում՝ աորտայի անևրիզմայի շերտազատում)<br>➢ Բարձր հաճախականության էլեկտրոաբլացիա<br>➢ Աորտայի պրոթեզավորում (քրոնիկ պլանային դեպքերում՝ աորտայի անևրիզմա)<br>➢ Սրտի փականների պրոթեզավորում<br>➢ Սրտի ռիթմը վարող սարքերի իմպլանտացիա<br>✓ Անոթային և նյարդավիրաբուժական վիրահատություններ և միջամտություններ<br>✓ Չարորակ ուռուցքային հիվանդությունների վիրահատական բուժում<br>✓ Անհատական հիվանդասենյակի արժեքի հատուցում օրական 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ՝ անկախ օրերի քանակից, հետծննդյան անհատական հիվանդասենյակի արժեքի հատուցում 3 օր՝ օրական 20.000 ՀՀ դրամ<br>**VI. ՔՐՈՆԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄ**<br>✓ Ամբուլատոր բուժում պահանջող յուրաքանչյուր քրոնիկ հիվանդության սրացման անսահմանափակ քանակի բուժում<br>✓ Ստացիոնար բուժում պահանջող յուրաքանչյուր քրոնիկ հիվանդության սրացման անսահմանակ բուժում<br>✓ Պլանային բուժում պահանջող հիվանդությունների վիրաբուժություն և/կամ միջամտություն (այդ թվում լապարասկոպիկ և էնդոսկոպիկ)<br>✓ Պլանային կարգով կատարվող կոնք-ազդրային, ծնկան և այլն հոդերի էնդոպրոթեզվորում և էնդոպրոթեզ հատուցվում է՝ տարեկան առավելագույնը 1.500.000 ՀՀ դրամ (պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած վնասվածքների դեպքում հատուցվում է 100%-ով) | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ✓ Քրոնիկ հիվանդությունների դինամիկ հսկողության համար նախատեսված խորհրդատվությունների, հետազոտությունների և պահպանողական բուժման **(սույն կետը տարածվում է նաև բացառություն հանդիսացող հիվանդությունների վրա)** հատուցում՝ առավելագույնը 30.000 ՀՀ դրամ սահմանաչափով<br>**VII. ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ**<br>✓ Ախտորոշում<br>✓ Աչքի տարատեսակ վնասվածքների և հիվանդությունների բուժում թերապևտիկ և վիրաբուժական եղանակներով՝ այդ թվում՝ կատարակտայի և գլաուկոմայի վիրահատությունները<br>✓ Տեսողության շտկում լազերային վիրաբուժության մեթոդով, հատուցվում է՝ առավելագույնը 200.000 ՀՀ դրամ սահմանաչափով<br>**VIII. ԴԵՂՈՐԱՅՔ**<br>✓ Նշանակված դեղորայքի ձեռքբերման ծախսերի հատուցում<br>✓ Համագործակցող դեղատներից նշանակված դեղորայքը անվճար/ուղեգրով ձեռք բերելու հնարավորություն<br>**IX. ԼՐԱՑՈՒՑԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**<br>• **Ատամնաբուժություն***<br>**3 ատամի ծածկույթ հատուցվում է յուրաքանչյուրը առավելագույնը 15000 ՀՀ դրամի սահմաններում**<br>✓ **Թերապիա**<br>➢ Կարիես և /կամ նրա բարդությունների բուժում<br>➢ Ուղիների մշակում<br>➢ Պլոմբավորում լուսակարծրացող պլոմբանյութով<br>• **Վիրաբուժություն**<br>➢ Ատամի պարզ հեռացում<br>➢ Ատամի բարդ հեռացում<br>➢ Իմաստության ատամի հեռացում<br>• **Ատամնաքարերի մաքրում և փայլեցում հատուցվում է 10000 ՀՀ դրամի սահմաններում**<br>* **Բացառություն են հանդիսանում էսթետիկ բուժման, փորձարարական մեթոդների և կոսմետիկ ատամնաբուժության ծախսերը:**<br>• Միջողային սկավառակների ճողվածքների վիրահատություն՝ հատուցում տարեկան մինչև 600000 ՀՀ դրամի սահմաններում (արժեքի մեջ ներառվում են նաև նախավիրահատական լաբարատոր և գործիքային հետազոտությունները), | | | | |

- Միջողային սկավառակների դեգեներատիվ ախտահարումների հայտնաբերմանն ուղղված հետազոտություններ **(ներառյալ ողնաշարի ՀՏ և ՄՌՏ),**
- Միջողային սկավառակների դեգեներատիվ ախտահարումների սրացումների **(օստեոխոնդրոզ և այլն)** դեղորայքային բուժում՝ հատուցում տարեկան մինչև 40000 ՀՀ դրամի սահմաններում
- Քթի միջնապատի դեֆորմացիայի, քթային անցուղիների, հարքթային խոռոչների վիրահատական բուժման հատուցում տարեկան մինչև 200000 ՀՀ դրամի սահմաններում (արժեքի մեջ ներառվում են նաև նախավիրահատական լաբարատոր և գործիքային հետազոտությունները),
- Բժշկական պարագաներ՝ անշարժացնող միջոցներ, կորսետ, էլաստիկ գուլպաներ, երակային կաթիլային համակարգ, ճողվածքի պլաստիկայի ցանց՝ հատուցում է տարեկան մինչև 100000 ՀՀ դրամի սահմաններում,
- Կորոնավիրուսային հիվանդության ամբուլատոր պայմաններում ախտորոշում և բուժում (ներառյալ ՊՇՌ մեթոդով թեստավորում) տարեկան մինչև 30000 ՀՀ դրամի սահմաններում,
- Չարորակ ուռուցքային հիվանդությունների ոչ վիրահատական բուժում՝ հատուցվում է տարեկան մինչև 500000 ՀՀ դրամի սահմաններում (ճառագայթային թերապիա, քիմիոթերապիա և այլն)
- Ֆիզիոթերապիա (էլեկտրոֆորեզ, ֆոնոֆորեզ, կրիոթորապիա, գերբարձր հաճախականության թերապիա, էլեկտրոստիմուլյացիա), լազերաթերապիա, կինեզոթերապիա՝ հատուցվում է տարեկան մինչև 80000 ՀՀ դրամի սահմաններում: Սույն կետը տարածվում է նաև ողնաշարաբանության վրա:

## X. ՀԱՎԵԼՅԱԼ ԾԱԾԿՈՒՅԹ

✓ Բարդ դեպքերում՝ երկրորդ կարծիք ոլորտի առաջատար մասնագետների խորհրդատվությամբ. եթե Ապահովագրված անձը համաձայն չէ բժշկի եզրակացության հետ, նա կարող է իր հաշվին անցնել 2-րդ հետազոտությունը: Եթե, արդյունքում, եզրակացությունները էապես տարբերվում են, Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու անցնել 3-րդ հետազոտությունը (տվյալ ոլորտում առաջատար մասնագետի մոտ), որն իրականացվում է Ապահովագրողի հաշվին: Եթե 3-րդ կարծիքն էապես տարբերվում է 1-ին մասնագետի տրամադրած եզրակացությունից Ապահովագրողը հատուցում է 2-րդ կարծիքի հետ կապված ծախսերը, հակառակ դեպքում այն հատուցման ենթակա չէ:

Ծրագրում չընդգրկված ցանկացած բժշկական ծառայություն և բժշկական նշանակության ապրանք:

✓ Ծածկույթային ծրագրի ներքո կարող են ապահովագրվել

1. Ապահովադրի ապահովագրված աշխատողների ընտանիքի անմիջական անդամները՝ մինչև 21 տարեկան զավակ(ներ), մինչև 68 տարեկան ամուսին/կին, ծնող(ներ): Աշխատողի ընտանիքի անմիջական անդամները կարող են ապահովագրվել Ծածկույթային ծրագրով նախատեսված նույն պայմաններով հետևյալ կարգով՝

- Տվյալ աշխատողի ապահովագրության գործողության սկզբից հետո մեկ ամսվա ընթացքում:
- Ծածկույթային ծրագրի ներքո ապահովագրված անձ-աշխատողի ամուսնության դեպքում ամուսինը կարող է ապահովագրվել ամուսնության օրվանից մեկ ամսվա ընթացքում:
- Ծածկույթային ծրագրի ներքո ապահովագրված անձ-աշխատողի զավակ(ներ)ի ծննդյան դեպքում զավակ(ներ)ը կարող են ապահովագրվել ծննդյան օրվանից մեկ ամսվա ընթացքում:

Ընդ որում Ապահովագրված անձ-աշխատողի ընտանիքի անդամի ապահովագրության դեպքում Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու ներկայացնել ընտանեկան կապը հաստատող փաստաթուղթ:

Ընտանիքի անդամների համար գործում են հետևյալ ապահովագրավճարները

ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ԳՈՐԾԱԿԻՑ

| | |
|---|---|
| 0-17 տարեկան | 0,8 |
| 18-45 տարեկան | 1 |
| 46-68 տարեկան | 1,3 |

## XI. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ

- Շուրջօրյա բժշկական խորհրդատվություն,
- Անհրաժեշտ բժշկական ծառայությունների մատուցման կազմակերպում,
- Ախտորոշիչ հետազոտությունների և բուժման լավագույն տարբերակների մշակում,

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | • Խորհրդատվություն բժշկական հաստատությունների և մասնագետների ընտրության հարցում,<br>• Բժշկական սպասարկման հնարավոր լավագույն պայմանների երաշխավորում,<br>• Պայմանագրով սահմանված բժշկական հաստատություններում մատուցված ծառայությունների դիմաց հաշիվների ստացում և վճարումների իրականացում: Մատուցվող բժշկական ծառայությունների որակի, արդյունավետության և համարժեքության անընդհատ հսկողության ապահովում,<br>• Ապահովագրական ընկերության կողմից ապահովագրական հատուցման վճարման մերժման և/կամ մասնակի բավարարման (մասնակի մերժման) դեպքում հատուցման որոշման ծանուցում ապահովադրին, որի դեպքում ապահովադիրն իրավասու է կազմակերպել Շահառուի անունից Ֆինանսական համակարգի հաշտարարին Ապահովագրական ընկերության դեմ համապատասխան պահանջի ներկայացումը: Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից պահանջն ամբողջությամբ կամ մասնակի բավարարվելու դեպքում Ապահովագրական ընկերությունը պարտավոր է անվերապահ համաձայնել այդ որոշման հետ և վճարել ոչ միայն Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման համաձայն վճարման ենթակա գումարը, այլ նաև ապահովադրին վճարել վճարման ենթակա գումարի 5%-ի չափով գումար, բայց ոչ պակաս քան 50,000 ՀՀ դրամն է:<br>• Ամենամյա կանխարգելիչ բժշկական զննումների անցկացում, դրանց արդյունքում հիվանդությունների վաղ հայտնաբերում, բուժում և հնարավոր բարդությունների կանխարգելում,<br>• Ապահովագրական գումար՝ յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար որպես ապահովագրական գումար է սահմանվում է 5,000,000 (հինգ միլիոն) ՀՀ դրամը:<br>• Ոչ պայմանական չհատուցվող գումար՝ չի կիրառվում:<br>• Ապահովագրությունը գործում է Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ողջ տարածքում:<br>• Ոչ համագործակցող բժշկական կենտրոններում ծառայությունների մատուցման դեպքում, երբ տվյալ ծառայությունը ենթակա է հատուցման, ապահովագրողը Շահառուին է վճարում փաստացի կատարված և հիմնավորված ծախսերը, ընդ որում՝ Շահառուիի կողմից բոլոր հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում որոշման կայացում և 2 աշխատանքային օրվա ընթացքում վճարման կատարում: | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | • Համագործակցող բժշկական կենտրոններում ծառայությունների մատուցման դեպքում, երբ տվյալ ծառայությունը ենթակա է հատուցման, Շահառուն տվյալ ծառայությունների համար որևէ լրավճար չի կատարում: Եթե Համագործակցող բժշկական կենտրոններում ծառայությունների մատուցման դիմաց վճարումները կատարվել է Շահառուի կողմից, երբ տվյալ ծառայությունը ենթակա է հատուցման, ապա ապահովագրողը վճարում է փաստացի կատարված ծախսերը, անկախ ապահովագրողի և ծառայություն մատուցողի միջև կնքված պայմանագրային հարաբերություններից, ընդ որում՝ Շահառուիի կողմից բոլոր հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում որոշման կայացում և 2 աշխատանքային օրվա ընթացքում վճարման կատարում:<br>• Ապահովագրական ընկերության կողմից անհրաժեշտ է մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչություն ներկայացնել եռամսյակային կտրվածքով տեղեկատվություն, առողջության ապահովագրության փաթեթից օգտված շահառուների թվաքանակի և փոխհատուցված գումարի վերաբերյալ:<br>• Շահառուի աշխատանքից ազատման դեպքում վերջինիս ապահովագրությունը դադարում է պատվիրատուի պահանջով, նույն աշխատողի փոխարեն այլ աշխատակից ընդունվելու դեպքում՝ վերջինս ներառվում է ապահովագրության փաթեթում պատվիրատուի պահանջով:<br>• Մեկ եռամսյակի գծով ապահովագրավճարը հավասար է փաստացի տվյալ եռամսյակի ընթացքում ապահովագրված անձանց քանակի և մեկ անձի ապահովագրավճարի բազմապատիկին:<br>• Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:<br>**XII. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ**<br>**Ծրագրով որպես ապահովագրական պատահար չեն դիտվում և հատուցման ենթակա չեն.**<br>1. Դեպքերը և վիճակները, որոնց գծով չեն ներկայացվել կամ թերի են հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը<br>2. Առանց բժշկական ցուցման իրականացված ցանկացած բժշկական ծախս Ապահովագրված անձի կողմից բժշկի նշանակումներին չհետևելու կամ դրանցից հրաժարվելու հետևանքով առաջացած ծախսերը | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 3. Վնասվածքներ, որոնք հասցվել են ալկոհոլի, թմրանյութի և տոքսիկ նյութի օգտագործման հետևանքով. ալկոհոլային և թմրադեղային թունավորումների բուժում, թմրամոլություն, ալկոհոլիզմ, տոքսիկոմանիա և դրանց հետևանքները<br>4. Ապահովագրված անձի կողմից ինքնիրեն կանխամտածված մարմնական վնասվածքների պատճառում: Ինքնասպանության փորձ<br>5. Հատուկ վտանգավոր վարակներ (բնական օսպա, ժանտախտ, սիբիրյան խոց, խոլերա, բծավոր տիֆ, վիրուսային հեմոռագիկ տենդեր՝ Էբոլա, Լասսա, Մարբուրգ), ՀՀ և ԱՀ իրավասու մարմինների կողմից հայտարարված համաճարակներ, նաև այն տարածքներից ներմուծված վարակները, որոնց սահմաններում հայտնաբերվել և ճանաչվել/հայտարարվել են համաճարակների օջախներ<br>6. ՄԻԱՎ, ՁԻԱՀ, սեռական վարակներ, այդ թվում առավելապես սեռական ճանապարհով փոխանցվող վարակներ (բուժում և յուրաքանչյուր հիվանդության և/կամ վարակի համար հետազոտություն, այդ թվում՝ բացահայտմանն ուղղված հետազոտություն), սեռական օրգանների սնկային հիվանդություններ<br>7. Ճառագայթային հիվանդություն և դրա հետևանքները<br>8. Տուբերկուլյոզ<br>9. Հեպատիտ B, C, D և E, այդ թվում դրանց բացահայտմանն ուղղված հետազոտությունները, լյարդի ցիռոզ, քրոնիկ երիկամային անբավարարություն, պլանային հեմոդիալիզ<br>10. Շաքարային դիաբետ և նրա մշտական, պահպանողական բուժում պահանջող բարդությունները՝ բացառությամբ շաքարային դիաբետով պայմանավորված անդամահատումները.<br>11. Բնածին անոմալիաները և զարգացման արատները կամ անատոմիական առանձնահատկությունները, ժառանգական և գենետիկ հիվանդությունները՝ պարբերական հիվանդությունը, էպիլեպսիան, դեֆորմացիաները և քրոմոսոմային խանգարումները, մանկական ուղեղային պարալիչը<br>12. Անպտղություն, սեռական ֆունկցիայի խանգարում և էրեկտիլ դիսֆունկցիա (իմպոտենցիա), սեռական հորմոնալ դիսֆունկցիաներ, դաշտանային ցիկլի խանգարում, այդ թվում նշված հիվանդությունների/շեղումների բացահայտմանն ուղղված հետազոտությունները<br>13. Հակաբեղմնավորում, արհեստական բեղմնավորում<br>14. Բուժխնամք, բժշկի տնային կանչ | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 15. Հիվանդությունների պլանային և պահպանողական բուժում (եթե այլ բան նախատեսված չէ ծածկույթով), բացառությամբ «Պլանային վիրաբուժություն» և «Չարորակ ուռուցքային հիվանդությունների վիրահատական բուժում» ծառայություններով նախատեսված դեպքերի<br>16. Ողնաշարի միջողնային սկավառակների ախտահարումները, դեգեներատիվ դիստրոֆիկ փոփոխությունները, օստեոխոնդրոզը՝ (եթե այլ բան նախատեսված չէ ծածկույթով)<br>17. Քրոնիկ հիվանդությունների դինամիկ հսկողության համար նախատեսված խորհրդատվություններ և հետազոտություններ (եթե այլ բան նախատեսված չէ ծածկույթով)<br>18. Բացիլակրության, դիսբակտերիոզի և պարազիտակրության համար նախատեսված հետազոտությունները և բուժումը<br>19. Վերականգնողական բուժում, ֆիզիոթերապիա, լազերաթերապիա, կինեզոթերապիա, փորձարարական և այլընտրանքային բժշկության մեթոդներ. իրիդոդիագնոստիկա, աուրիկուլոդիագնոստիկա, ասեղնաբուժական ախտորոշում, էլեկտրոնային բիոֆունկցիոնալ օրգանոմետրիա, մանուալ թերապիա, էներգաինֆորմատիկա, ցուբոթերապիա, էլեկտրաասեղնաբուժություն, հիրուդոթերապիա, ֆիտոթերապիա, հոմեոպաթիա, ախտորոշում Ֆոլլի մեթոդով և այլն /եթե այլ բան նախատեսված չէ ծածկույթով/<br>20. Վիտամինաթերապիա, կենսաբանական ակտիվ հավելումներ, հոմեոպատիկ դեղամիջոցներ, կոսմետիկ միջոցներ, խոտաբույսեր, տարբեր ծագման յուղեր,<br>21. Այն ծառայությունները, որոնք մատուցվում են կանխարգելիչ և առող-ջարանային նպատակներով, կանխարգելիչ մերսում, ջրային պրոցեդուրաներ, աղիքների մոնիթորինգային մաքրում, սաունա, սոլյարի և այլն<br>22. էքստրակորպորալ բուժման մեթոդներ. օզոնաթերապիա, պլազմաֆերեզ, հիպերբարիկ օքսիգենացում, ալֆա-կապսուլա<br>23. Պրոթեզները, բժշկական սարքավորումները, իմպլանտները, տեսողական և լսողական սարքերը, ինչպես նաև այլ կարգավորիչ բժշկական հարմարանքներ, հաշմանդամային սայլակները, օրթոպեդիկ սարքերը, կենսաակտիվ հավելումները, կանխարգելիչ վիտամինաթերապիան, կոսմետիկ պարագաները: Սույն կետում նշված բացառությունները չեն վերաբերում՝<br>ա. սրտի վիրահատական միջամտություններին, այդ թվում՝ սրտի փականների պրոթեզներին, սրտի ռիթմը վարող սարքերի իմպլանտներին և այլն, | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | բ. ներանոթային միջամտություններին, այդ թվում՝ գլխուղեղի անոթային հիվանդությունների էնդովասկուլյար բուժման ժամանակ օգտագործվող միկրոկաթետերներ, միկրոպարույրներ, օնիքս և այլն.<br>գ.ծածկույթով նախատեսված դեպքերին:<br>24. Պլաստիկ, կոսմետիկ նպատակներով, ոչ արմատական վիրաբուժություն (ներառյալ պլաստիկ և վերականգնողական վիրաբուժությունը), բացառությամբ պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքների, մաշկի հիվանդությունների (կոշտուկներ, պտկիկներ, գորտնուկներ և խալեր, կանդիլոմաներ) և դրանց բարդացումների հետ կապված իրականացվող պլաստիկ և վերականգնողական վիրահատություններ<br>25. Նյարդային համակարգի դեմիելինիզացնող հիվանդություններ: Աուտոիմուն և շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդություններ, պսորիազ, օնիխոմիկոզներ, սեբորեա, ակնե (կորյակացան)<br>26. Հոգեթերապևտի ծառայություններ, հիպնոս: Նևրոզներ և սահմանային վիճակներ (նեյրոցիրկուլյատոր դիստոնիա, վեգետաանոթային դիստոնիա, աստենո-դեպրեսիվ համախտանիշ, աստենո-նևրոտիկ համախտանիշ և այլն), հոգեկան հիվանդություններ<br>27. Քաշի և խոսքի շտկում, սեռի վիրաբուժական փոփոխում<br>28. Մեքենավարման, զինակրության իրավունքի, սպորտաառողջարանային միջոցառումների մասնակցելու, ուսումնական հաստատություն ընդունվելու համար հետազոտությունների անցկացում և տեղեկանքների տրամադրում<br>29. Ծրագրում չընդգրկված ցանկացած բժշկական ծառայություն և բժշկական նշանակության ապրանք:<br>**XIII. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՉ ՊԱՏՇԱՃ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**<br>Ծառայությունների ոչ պատշաճ մատուցման դեպքում շահառուն իր հիմնավորված փաստարկներն է ներկայացնում Երևանի քաղաքապետարան, որից հետո վերջինս մեկ օրյա ժամկետում գրավոր ծանուցում է գնման պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությանը՝ թերությունները վերացնելու պահանջով, դրա համար սահմանելով հստակ ժամկետ: Ապահովագրական ընկերությունը սահմանված ժամկետում շահառուին պատշաճ ծառայություններ մատուցելու ուղղությամբ համապատասխան միջոցներ չձեռնարկելու դեպքում, Երևանի քաղաքապետարանը ձեռնարկում է միջոցներ | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | շահառուի համար սույն կարգով նախատեսված պատշաճ բուժօգնություն ապահովելու ուղղությամբ, որոնց ծախսերի ամբողջական հատուցումը պարտավոր է իրականացնել գնման պայմանագիր կնքած անձը, եթե դեպքը վերջինիս կողմից ճանաչվել է որպես ապահովագրական պատահար եւ ենթակա է հատուցման:<br>**XIV. ՇԱՀԱՌՈՒՆԵՐ**<br>1. Առողջության ապահովագրության շահառուներ են համարվում՝ Երևանի քաղաքապետարանի /ներառյալ Երևանի վարչական շրջանները/, Երևան հիմնադրամի, Գրադարանների, Թանգարանների, Թատրոնների, Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների ենթակայության մանկապարտեզների, Շախմատի դպրոցների, Երաժշտական դպրոցների, Արվեստի դպրոցների, Մարզադպրոցների, Մանկապատանեկան ստեղծագործության և գեղագիտական դաստիարակության կենտրոնների, Մշակույթի կենտրոնների, Այլ մշակութային կազմակերպությունների, «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի, «Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի, «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի, «Ջրային կառույցներ» ՓԲԸ-ի, «Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ-ի, «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ-ի, «Երքաղլույս» ՓԲԸ-ի, «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի, «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի, «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ի, «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի, «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի հաստիքացուցակներով նախատեսված հաստիք զբաղեցնող աշխատողների համար «Առողջության ապահովագրության» փաթեթի ձեռք բերում, ***ում համար Առողջության ապահովագրության ծառայությունների մատուցման ժամկետը սահմանվում է առողջության ապահովագրության վկայագրի տրամադրման օրվանից մինչև 365 օր:*** **Ընդամենը շահառուների թիվ – մինչև 15507 մարդ:**<br>2. Առողջապահության ապահովագրության փաթեթի շահառուների ընդամենը քանակի սահմաններում փաթեթում Պատվիրատուի պահանջով կարող են ներառվել Երևանի ենթակայության այլ կազմակերպությունների հաստիքացուցակներով նախատեսված հաստիք զբաղեցնող աշխատողներ, ***ում համար Առողջության ապահովագրության ծառայությունների մատուցման ժամկետը է սահմանվում առողջության ապահովագրության վկայագրի*** | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ***տրամադրման օրվանից մինչև 1-ին կետում նշված շահառուների համար Առողջության ապահովագրության ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետի ավարտը:***<br>3. Առողջապահության ապահովագրության փաթեթի շահառու կարող են դառնալ Ապահովադրի ապահովագրված աշխատողների ընտանիքի անմիջական անդամները՝ մինչև 21 տարեկան զավակ(ներ), մինչև 68 տարեկան ամուսին/կին, ծնող(ներ) X.-րդ՝ «Հավելյալ ծածկույթ» բաժնի 1-ին կետով սահմանված կարգով, ***ում համար Առողջության ապահովագրության ծառայությունների մատուցման ժամկետը է սահմանվում առողջության ապահովագրության վկայագրի տրամադրման օրվանից մինչև 1-ին կետում նշված շահառուների համար Առողջության ապահովագրության ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետի ավարտը:***<br>**XV.ՎԿԱՅԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ**<br>Պայմանագրի կնքման օրվանից 21-րդ օրացուցային օրը ընկերության կողմից շահառուներին տրամադրվում է առողջության ապահովագրության վկայագիր (որը ենթակա է սպասարկման ՀՀ և ԱՀ տարածքի բոլոր բժշկական հաստատություններում), որն ուժի մեջ է մտնում տրամադրման օրը և գործում է մինչև 365 օր: | | | | |

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** **ԿԱՏԱՐՈՂ**

---------------------------------

/ստորագրություն/
Կ.Տ

--------------------------------

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
*«        »              20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված Չ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | |
| 1 | 66511120/1 | «Առողջության ապահովագրություն» փաթեթ | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| | | | % | % | % | % | 48% | 48% | 48 % | 100% | 100% | 100 % | 100% |
| | 66511120/502 | | % | % | % | % | % | % | % | % | % | % | % |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված 3*
*«      »           20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________
հհ __________________________
հվհհ ________________________

Պատվիրատու

______________________________

______________________________

գտնվելու վայրը _________________
հհ_____________________________
հվհհ____________________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«      » «            » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝   __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «     »   «              »  20    թ. դուրս գրված N ___  հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«      »      20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20   թ. ______________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20  թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն